

Գիտություն

ՓԵՏՐՎԱՐ

№ 2

(362)

2022 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ԵՐԲ ԽՈՍՔԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԳՈՐԾ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը աշխատանքային այցով մեկնել էր Ռուսաստանի Դաշնության և Մոսկվայում հանդիպել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևին: Հանդիպման ժամանակ քննարկվել են հայ-ռուսական գիտական համագործակցության հեռանկարները, համատեղ իրականացվող ծրագրերը և առկա խնդիրները:

ՌԳԱ նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևը և ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը անդրադարձել են 2021 թ.-ի նոյեմբերի 5-ին երևանում ստորագրված Գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրի դրույթների ի-



մասին է, որոնք օգտագործվում են որպես աճի խթանիչներ: Ես կառավարման մասին «Նախնի» կաթնաթթվային մթերքը և դրա հիման վրա մոր պրոբիոտիկների ստացումը՝ ասոցացված խառնուրդի տեսքով: Այստեղ անգամ կան նախադրյալներ՝ հասնելու համատեղ արտադրության»,- ասաց Աշոտ Սաղյանը:

Ակադեմիկոս Սաղյանը նշեց, որ նախատեսվում է ՌԳԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Բալեգայի այցը Հայաստան, ով ժամանակին եղել է Վիկտոր Համբարձումյանի ասպիրանտը: Այցի նպատակն է քննարկել Բյուրականի աստղադիտարանի հետ կապված հարցերը:

Մոսկվայում Աշոտ Սաղյանը հանդիպում է ունեցել տեղի հայ համայնքի հետ, մտավո-

բեռնող՝ հատուկ մանոմենթներ, որոնք կօգտագործվեն քուլիդի և այլ տեսակների վիրուսային հիվանդությունների բուժման համար:

Այդ տեխնոլոգիան իրենց մոտ բավականին բարձր մակարդակի վրա է: Միջուկային ֆիզիկայի մեթոդաբանության կիրառմամբ նրանք կարողանում են ստանալ մեմբրանային թաղանթներ: Ես առաջարկել եմ փորձել մանոսելեկտիվ, մանոչափների մասնիկներ պարունակող մանոսեղանքներով այդ մեմբրանների վրա մատցեցնել մաս խիթալային նյութեր, որը հնարավորություն կտա ստանալու մեմբրաններ հատուկ օպտիկապես ակտիվ իզոմերների բաժանման համար, որն այսօր բավականին մեծ խնդիր է բժշկության, կենսաօրգանական քիմիայի, մանրէաբանության և այլ ոլորտներում: Նման խեղճեր հայտնի են, բայց ոչ մեմբրանների մակարդակով: Դրանք օգտագործվում են հեղուկային քրոմատոգրաֆիայի ոլորտում: «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում վերջին 10 տարիների ընթացքում դրանք օգտագործում ենք վերլուծական նպատակով, կարողանում ենք խառնուրդում որոշել առանձին օպտիկական իզոմերների քանակը, իսկ սա ավելի շատ կուլենա կիրառական նշանակություն: Եթե հաջողվի մանոմենթների մակարդակով ստանալ այդպիսի թաղանթներ, որոնց ծակոտկենքերը համալրված կլինեն մի քանի շերտանի խիթալային կենտրոններով, դա հնարավորություն կտա մաս կիրառական ասպեկտով իրարից բաժանելու օպտիկական իզոմերները: Սա վերջին 20-30 տարիներին կենսատեխնոլոգիայի, քիմիայի, բժշկության և այլ ոլորտներում ամենահրատապ և պահանջված խնդիրներից մեկն է»,- ասաց ակադեմիկոս Սաղյանը:

Աշոտ Սաղյանի առաջարկությունը մեծ արձագանք է գտել, և Ռուսաստանի գործընկերների հետ նախատեսվում է մշակել համատեղ ծրագիր՝ ֆինանսավորում ստանալու համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը Ռուսաստանի

Դաշնությունում աշխատանքային քննարկումներ է անցկացրել

րականացման ճանապարհային քարտեզի կետերին: Աշոտ Սաղյանի գնահատմամբ ճանապարհային քարտեզի կետերի շուրջ 80 տոկոսի առումով արդեն իսկ կա առաջընթաց:

«Ռուսաստանի մեր գործընկերներն իրականացրել են մոնիթորինգ և հստակ գիտեն՝ ճանապարհային քարտեզի որ կետով ինչպիսի խնդիրներ կան, որտեղ կան ֆինանսավորման համար նախադրյալներ, իսկ որտեղ պետք է փորձել ֆինանսավորում գտնել»:

Առանձնահատուկ առաջընթաց կա ֆիզիկայի ոլորտում: «Ռոսկոսմոս»-ի և «Ռոսատոմ»-ի կողմից իրականացվող հետազոտություններին մասնակցում են մաս մեր երկու ինստիտուտները՝ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը և Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը:

Բավականին հետաքրքրություն կա Հայաստանում հիդրոէկոլոգիայի ոլորտում իրականացված ուսումնասիրությունների նկատմամբ, մասնավորապես Սևանա լճի: Նախատեսվում է փոխանակել մեր ջրային ոլորտի և Ռուսաստանի Բայկալ լճի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունք-

ները և փորձել գտնել ընդհանուր օրինաչափություններ հետազոտություններին համար:

Ունենք արձանագրված հաջողություններ բնապահպանության ոլորտում, որտեղ համագործակցում են Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգա-մոնոֆերային հետազոտությունների կենտրոնը և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի համապատասխան ինստիտուտները:

Ունենք առաջընթաց քուլիդի հետ կապված հիմնարար հետազոտությունների շուրջ, որոնք իրականացվում են մեր մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում: Խոսքը ախտորոշման թեստերի պատրաստման մասին է: Ռուսական կողմն էլ ունի այդ թեստերի իր տարբերակը, և դրանք համադրելու մտադրություն կա՝ ավելի արդյունավետ տարբերակներ մշակելու համար:

Նաև կա համագործակցության հետաքրքրություն գյուղատնտեսության ոլորտում, մասնավորապես «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում ստացված կենսապատրաստուկների շուրջ: Խոսքը ինչպես կենսապարարտանյութի, այնպես էլ այն կենսապատրաստուկների

րականների և բարեբարների հետ քննարկել է Հայաստանում գիտության ոլորտում առկա խնդիրներն ու զարգացման հեռանկարները:

Աշոտ Սաղյանը մաս առնել է Դուբնա քաղաքում գտնվող Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ՝ ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գրիգորի Տրուբնիկովի հրավերով: Այստեղ նա հանդիպել է ազգությամբ հայ անվանի ֆիզիկոս, ՌԳԱ ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանին, ում 2021 թ.-ի վերջին շնորհվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մեմդելեի անվան միջազգային մրցանակը՝ հիմնարար գիտությունների բնագավառում նվաճումների համար:

«Ակադեմիկոս Հովհաննիսյանի հետ քննարկել ենք հնարավոր համատեղ ծրագրերը՝ կապված մոր տեսակի մանոմենթների ստացման հետ, որին մասնակցություն կունենան մաս մեր ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, Երևանի պետական համալսարանի զենետիկայի ամբիոնը, ֆիզիկայի ֆակուլտետը: Նպատակն է ստանալ հատուկ մանոսելեկտիվ մեմբրաններ վիրուսների համար»-վիրուս

ՀՀ ԳԱԱ-ում գիտաժողովով նշանավորվեց Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը

Ս.թ. փետրվարի 9-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Հայաստան-Իրան. պատմական անցյալը և ներկան» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին:

Ողջունելով ներկաներին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը նշեց. «1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը, դառնալով անկախ պետություն, առաջին հերթին ձգտում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել բարեկամների հետ: Իրանն առաջին պետություններից մեկն էր, որը ճանաչել է Հայաստանի Հանրապետության անկախությունը: Նորանկախ Հայաստանը կանգնած էր լրջագույն մարտահրավերների առջև, և Իրանը Հայաստանի այն եզակի հարևաններից է, որը փորձում էր հնարավորինս աջակցել մեզ: Այս տարիների ընթացքում հայ-իրանական հարաբերությունները բազմաթիվ փորձություններ են հաղթահարել, ինչը կարող է օրինակ հանդիսանալ աշխարհի տարբեր ժողովուրդների համար»:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանն ասաց. «90-ական թվականներին չափազանց եական էր Իրանի աջակցությունը մեր երկրին, և այսօր, աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում, մեր

հարաբերությունները հնագույն հարևանի հետ ամուր կառուցելը հնարավորություն կտա դիմագրավելու տեղի ունեցող և սպառնալի աշխարհաքաղաքական մարտահրավերներին»:

Գիտաժողովի մասնակիցներին ուղղված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի ուղերձում մասնավորապես, նշված է. «Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակն առիթ է՝ համագործակցության մոր հեռանկարներին ամրապնդելու և համատեղ մոր ձեռքբերումների ուղին նախատեսելու համար: Արդի մարտահրավերների հանդիման, երբ աշխարհն այնքան էլ հակառակություններից, պատերազմներից, երկակի չափանիշներով դրսևորվող ամառ-դարությունից, երբ ոտնահարվում են անհատների, ազգերի ու պետությունների իրավունքները, առավել պահանջված ու կենսական են դառնում բարի կամքն ու գործակցությունը՝ համուն խաղաղության և բարօրության հաստատման: Հավատարիմ այս դիրքորոշմանը՝ Հայաստանը և Իրանը հետևողական են եղել արդյունաշատ հարաբերությունների կառուցման գործում, ինչը նորանկախ մեր երկրին հնարավորություն է ընձեռել մաս դիմակայելու շրջափակման դժվարություններին և բազմակողմանի համագործակցության արգասիքներ բերել մեր երկու բարեկամ ժողովուրդներին»:

Գիտաժողովի մասնակիցներին իր ողջույնի ուղերձն էր ողել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ

»2

ՀՀ ԳԱԱ նախագահության հայտարարությունն առ 14.02.2022

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ը վերահաստատում են իրենց դիրքորոշումն առ այն, որ դեմ են բազմաբնակարան շենքի կառուցմանը ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տարածքում գտնվող ջրավազանի տեղում: Այդ շինությունն անվերահսկելի ռիսկեր է ստեղծում ՀՀ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող, իր տեսակի մեջ միակ գիտաարտադրական կենտրոնի բնականոն գործունեության ու զարգացման համար:

Հայաստանի տնտեսական զարգացումն ու անվտանգությունն ուղղակիորեն կապված են բարձր տեխնոլոգիաների, այդ թվում՝ քիմիայի և հարակից գիտությունների խթանման հետ: Ուստի ակադեմիական գիտական հաստատությունների պահպանումն ու շեշտակի զարգացումն անհրաժեշտություն են:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ-ում գիտաժողովով նշանավորվեց Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը



➤ Միջոցառմանը նախագահեց ՀՀ ԳԱԱ-ի տնօրեն Մանուկ Բաբայանը, որը նշեց, որ 30 տարիները նշանավորվել են հայ-իրանական բազմադարյան հարաբերությունների ընդլայնման, նորամուտի և զարգացման, որոնցում հայկական և իրանական մշակույթի, գիտության, արվեստի, մշակութային և այլ բնագավառներում: Կարևոր նաև են կազմում նաև գիտական կապերը հայ և իրանցի գիտնականների միջև: Այս ոլորտում նույնպես առկա է դեռևս չիրացված հսկայական ներուժ, որի ուղղությամբ պետք է ջանքեր գործադրենք: Վստահ են, որ նմանօրինակ գիտաժողովները նոր խթան կարող են հանդիսանալ գիտակրթական հաստատությունների փոխգործակցության խորացման համար:

Իհի՜շ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Ամիր Բեգլույանը հիմնականում նախաձեռնեց իր նախնական հարաբերությունների հարաբերությունները տարբեր ու

ղղություններում ընդլայնվել ու ամրապնդվել են, իրականացվել են համագործակցության բազմաթիվ նախագծեր, որոնցից կարևոր է Իրանի Իսլամական Հանրապետության գաղափարի և Հայաստանում էլեկտրահաղորդման գծերի կառուցումը: Կողմերը հետևողական են լինում երկու երկրների տարածքով տրանսպորտային միջանցքների ստեղծմանը, որոնք կապահովեն երկու ժողովուրդների շահերը և կամրապնդեն տարածաշրջանի կայունությունը ու անվտանգությունը: Չնայած այս հաջողություններին՝ հավատացած են, որ երկու երկրների միջև հարաբերությունները զարգացնելու շատ ավելի մեծ և բազմազան հնարավորություններ ու կարողություններ կան: Ցավոք, Ղարաբաղյան հակամարտությունը վերջին 30 տարվա ընթացքում ոչ միայն Կովկասյան տարածաշրջանը կանգնեցրեց անվտանգային ճգնաժամի և անկայունության առջև, այլև ազդեց այս տարածաշրջանի և նրա շրջակա միջավայրի աճի և զարգացման վրա և

դանդաղեցրեց տարածաշրջանային փոխգործակցությունները: Այնուամենայնիվ, պատիվ ունեն հայտնելու Ձեզ, որ հակամարտության սկզբից Իրանի Իսլամական Հանրապետությունը, ընդգծելով երկրների տարածաշրջանային ամբողջականությունը հարգելու և ազգերի իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը, փորձել է փորձում է աջակցել հակամարտության արդարացի լուծմանը: Կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող վերջին զարգացումները պայմաններ են ստեղծել Իրանի և Հայաստանի միջև համագործակցության ընդլայնման, ինչպես նաև տարածաշրջանային բազմակողմ համագործակցության ձևավորման համար: Ցանկանում են ընդգծել իմ երկրի կամքը Հայաստանի Հանրապետության հետ երկկողմ և տարածաշրջանային համագործակցությունն ամրապնդելու հարցում:

Իրանի Իսլամական Հանրապետությունում առաջին ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բայրաբյանի ուղերձում մասնավորապես նշված է. «Այսօր,

երբ աշխարհն ապրում է իր շրջադարձային պահը, երբ այն տարածաշրջանը, որի մեջ ընդգրկված են Հայաստանն ու Իրանը, բառի բուն իմաստով փոթորկված է՝ կանգնած լինելով անկանխատեսելի մարտահրավերների առջև, մեր խորին համոզմամբ, հայ և իրանական ժողովուրդների երթը բարեկամության և համագործակցության ուղիով ոչ մի ուժի կողմից չի կարող խափանվել: Այն շարունակելու է ընթանալ ճիշտ այն հուսալի ճանապարհով, որի հիմքը դրվել է ուղիղ 30 տարի առաջ»:

Գիտաժողովում ելույթներ ունեցան ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանը, Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Գրիգոր Արշակյանը, ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյրեդ Զոսեյան Թաթևաբաբային: Հայ և իրանցի գիտնականները ներկայացրին զեկուցումներ՝ նվիրված Հայաստան-Իրան միջպետական հարաբերություններին, անդրադարձան երկու ժողովուրդների կապին կրթության, գիտության, մշակույթի ոլորտներում:

Գիտաժողովի կազմկոմիտեի քարտուղար Գոհար Իսկանդարյանը նշեց, որ գիտաժողովը հարգանքի տուրք է Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերութե-

րությունների հաստատմանն ու զարգացմանը նպաստած բոլոր գործիչներին: «Ցանկանում են երախտագիտություն հայտնել հայ և իրանցի մեր բոլոր դիվանագետներին, քաղաքական գործիչներին, որոնց համառ ու անցկան ջանքերով լուծվել են երբեմն անլուծելի թվացող խնդիրներ», - ասաց նա:

Գոհար Իսկանդարյանը նշեց բոլոր կառույցներին և անձանց, ովքեր աջակցել են գիտաժողովի կազմակերպմանն ու անցկացմանը՝ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը, Հայաստանի ազգային արխիվը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ գիտության կոմիտեն: «Խիստ կարևորում ենք գիտական, կրթական և դիվանագիտական հիմնարկների միավորումը հենց Գիտությունների ազգային ակադեմիայի հարկի ներքո», - նշեց նա:

Գիտաժողովի շրջանակներում Հայաստանի ազգային արխիվի կողմից ներկայացվեց հայ-իրանական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի ցուցադրություն:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին փետրվարի 10-ին ՀՀ ԳԱԱ-ի նախագահության միասնական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի ցուցադրությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Արցախը՝ գիտական հանրության ուշադրության կենտրոնում.

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի գրքերի շնորհանդեսը



Ս.թ. փետրվարի 12-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ հանդիպում Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի հետ և նրա «Արդեշտանի եթնոգրաֆիկ աշխարհաքաղաքականությունը և ազգային փոքրամասնությունների արձագանքը» (մաս I) «Քրդերն ու թաթերը» և «Ղարաբաղյան հիդրոաշխարհաքաղաքականություն. էկզիստենցիալ հիմնախնդիր-

ներ ներկայի և ապագայի համար» գրքերի շնորհանդեսը: Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ ղեկավար կազմը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրենները, գիտնականներ, դասախոսներ, ուսանողներ:

Ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը, ողջունելով Դավիթ Բաբայանին և հանդիպման մասնակիցներին, նշեց. «Մեր մտավորականությունը, մեր գիտնականներն իրենց սրտի խորքում որպես գերագույն խնդիր պահում են Արցախը և Արցախի հետ կապված հարցերը: Ողջունում ենք ձեզ և ուրախ ենք, որ այսօր այստեղ եք»:

Այս արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը շնորհակալություն հայտնեց Աշոտ Սարգսյանին և ՀՀ ԳԱԱ անձնակազմին: «Մենք միշտ կարևորել ենք Գիտությունների ազգային ակադեմիայի հետ փոխգործակցությունը՝ որպես մեր ժողովրդի, մեր պետականության, գիտության ա-

ռանցքային կառույց: Ակադեմիան միշտ պետք է լինի մեր ինտելեկտուալ ներուժի կիզակետը: Խորհրդանշական է, որ այս շնորհանդեսը տեղի է ունենում հենց Գիտությունների ազգային ակադեմիայում, և դա ինձ համար մեծ պատիվ է»,- նշեց Դավիթ Բաբայանը:

Ներկայացնելով «Արդեշտանի եթնոգրաֆիկ աշխարհաքաղաքականությունը և ազգային փոքրամասնությունների արձագանքը» (մաս I) «Քրդերն ու թաթերը» գիրքը՝ Դավիթ Բաբայանն ասաց. «Մեզ համար շատ կարևոր է ուսումնասիրել Արդեշտանի պատմությունը, քաղաքականությունը, տնտեսությունը, մշակույթը: Առանց դրա մենք ավելի քիչ պատրաստ կլինեք այն մարտահրավերներին, որոնք զայիս են այդ երկրից: Այս համատեքստում ուսումնասիրում ենք ազգային փոքրամասնությունների պատմությունն ու քաղաքականությունը»:

Խոսելով «Ղարաբաղյան հիդ-

րոաշխարհաքաղաքականություն. էկզիստենցիալ հիմնախնդիրներ ներկայի և ապագայի համար» գրքի մասին՝ Դավիթ Բաբայանը նշեց. «Ձերայն հիմնախնդիրը եղել է միայն մասնականության կարևոր քաղաքականության մեկը: Ժամանակին Արցախը ջրային տեսակետից շատ բարձր անվտանգության համակարգ ուներ, որովհետև մենք վերահսկում էինք մեր բոլոր ջրային ռեսուրսների ակունքները: 2020 թվականի պատերազմից հետո իրավիճակն արմատապես փոխվել է, և մենք պետք է հստակ ուշադրություն դարձնենք այդ գործընթացներին»:

Հանդիպման մասնակիցները Դավիթ Բաբայանին ուղղեցին իրենց հուզող հարցերը, մասնավորապես Արդեշտանի կողմից հայկական հուշարձանների ոչնչացման վերաբերյալ: ՀՀ ԳԱԱ-ի գիտնականները նշեցին, որ տարիներ շարունակ ուսումնասիրվել են Արցախի պատմամշակութային հու-

շարձանները, առկա են գիտական, փաստագրական տվյալներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել միջազգային հանրությանը: Երիտասարդ գիտնականները ևս պատրաստակամություն հայտնեցին աջակցելու արցախահայությանը և ներգրավվելու Արցախի կրթական ու գիտական կյանքում:

Արձագանքելով հարցերին՝ Դավիթ Բաբայանը, մասնավորապես շեշտեց. «Արդեշտանը հայագիտությունը դարձրել է ռազմավարական ամենակարևոր ուղղություններից մեկը, և մենք էլ պետք է արդեքանագիտությունը դարձնենք մեր կարևորագույն ուղղություններից մեկը: Ես գիտեմ, որ Գիտությունների ազգային ակադեմիան ունի այդ ներուժը, պետք է ամեն ինչ ամենք, որ ակադեմիան արտաքին քաղաքականության մեջ ունենա իր կարևոր ասեկը»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Եվրոպացի գիտնականներն իրենց հայտնաբերած քարաքոսի նոր տեսակն անվանակոչել են ի պատիվ ՀՀ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտնական Արսեն Գասպարյանի



Բելգիայի Լիեժի համալսարանի գիտնականներ Էմմանուել Սերյուզիոն, Նիկոլաս Մագեյնը և հոլանդացի գիտնական Պիտեր վան դեն Բուսը հայտնաբերել են քարաքոսի *Ramalina* ցեղի նոր տեսակ և այն անվանակոչել են ի պատիվ ՀՀ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի քարաքոսերի հետազոտման ու պահպանության գիտական խմբի ղեկավար Արսեն Գասպարյանի՝ *Ramalina arsenii*:

Եվրոպացի գիտնականների հետա-

զոտության արդյունքները հրապարակված են Քենթրիջի համալսարանի կողմից տպագրվող «The Lichenologist» գիտական ամսագրում: Գիտական հոդվածում մասնավորապես նշված է. «Այս նոր տեսակն անվանվել է մեր ակադմիկոս գործընկեր դոկտոր Արսեն Գասպարյանի պատվին, ով վերանայել է *Ramalina pollinaria* քարաքոսերի խմբի դասակարգումը (Gasparian et al. 2017), նաև հրապարակել է Հայաստանի էպիֆիտային քարաքոսերի վերաբերյալ հե-

տաքրքիր մեմագրություն (Gasparian & Sipman 2016) (This new species is named after our distinguished colleague Dr Arsen Gasparian, who revised the taxonomy of the *Ramalina pollinaria* group (Gasparian et al. 2017); he also published an interesting account of epiphytic lichens in Armenia (Gasparian & Sipman 2016))»:

Ramalina ցեղը շուրջ 200 տեսակի քարաքոսեր է պարունակում: Այս նոր տեսակը, որը հայտնաբերվել է


ՀՀ ԳԱՄ-ի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում առաջին անգամ ցույց է փրվել ապոմակսան «անշարժ անցումների» գոյությունը



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում առաջին անգամ փորձարարորեն և տեսականորեն ցույց է տրվել ալկալիական մետաղների ատոմական «անշարժ անցումների» գոյությունը, որոնք կարող են լինել ատոմական անցումների հաճախության նշիչներ։

Ատոմի գերմուրք կառուցվածքի մակարդակների մագնիսական ենթամակարդակներն արտաքին մագնիսական դաշտում «խառնվում» են։ Ենթամակարդակների «խառնումը» չի կրում անկաուն բնույթ։ Այն բերում է ատոմական անցումների հավանականությունների և հաճախային շեղումների փոփոխության։ Այս «խառնման» հետևանքներից են ի

սկզբանե «արգելված անցումների»՝ մագնիսականորեն ինդուցված անցումների առկայությունը և դրանց ազդեցությունը շրջանային դիքրոիզմում, էլեկտրամագնիսականորեն ինդուցված թափանցելիությունում և այլն։ Ատոմական ենթամակարդակների «խառնման» հետևանքներից է համարյա «անշարժ անցումների» գոյությունը։ Այդ անցումների հաճախային շեղումները մնում են համարյա անփոփոխ մագնիսական դաշտի բավական մեծ տիրույթում։ Տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքում աշխատության հեղինակները՝ Ար-



մեն Սարգսյանը, Արա Տոնոյանը, Դավիթ Սարգսյանը, ցույց են տվել «անշարժ անցումների» գոյությունը, դրանց հաճախային շեղման դիրքի համեմատական անշարժությունը։

Գիտնականները ցույց են տալիս, որ պահպանվում են սպեկտրալ անցումների հաճախությունների դիրքերը և անալիտիկները, ինչը կիրառելի է քանակական սպեկտրասկոպիայի համար։ Առաջարկվող տեխնիկան հաջողությամբ կիրառվել է փորձարկվել է գերձնշման պառակտման և ատոմային անցման հավանականությունների չափման, ատոմային հաճախականության հղման մշակման, իզոտոպային առատության որոշման, ատոմ-մակերևույթ փոխազդեցության ուսումնասիրության և ատոմային անցման

հաճախության մագնիսական դաշտով պայմանավորված փոփոխության որոշման համար։

Հետազոտության արդյունքները տպագրվել են միջազգային գիտական առաջատար ամսագրերում՝ «The European Physical Journal», «Журнал экспериментальной и теоретической физики», «Optics Letters»։

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ Ֆրանսիայի Բուրգունդիայի համալսարանի պրոֆեսոր Կլոդ Լերուայի լաբորատորիայի հետ համագործակցությամբ։

ՀՀ ԳԱՄ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Սևանիտներ. հայ գիտնականների բացահայտումը Սևանա լճում



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատողների ուսումնասիրությունների արդյունքում հաստատվել է Սևանա լճի ափամերձ և ստորգետնյա հատվածներում միկրոբիալիթների կամ սևանիտների առկայությունը։ Գիտական աշխատանքները ղեկավարել է երկրաբանական գիտությունների թեկնածու Լիլիթ Սահակյանը։

Միկրոբիալիթները կամ սևանիտները նստվածքային (կարբոնատային) գոյացություններ են, որոնք առաջացել են մի քանի հազար տարվա ընթացքում ցիանոբակտերիաների (կապտականաչ ջրմուռների) գործունեության արդյունքում,

ջրի որոշակի քիմիական կազմի և CO₂ գազի առկայության պայմաններում։ Ցիանոբակտերիաներն ամենաինքն օրգանիզմներն են (նրանց գործունեության արդյունքում մոտ 3.7 մլրդ տարի առաջ ձևավորվել են երկրի մոլորակի ամենաինքն նստվածքային ապարները՝ ստրոմատոլիթները), որոնք արտադրում են թթվածին՝ օգտագործելով CO₂ գազը ֆոտոսինթեզի ժամանակ։ CO₂-ը կարևոր բաղադրիչ է ցիանոբակտերիաների աճի համար՝ ներառյալ արևի ճառագայթները, ջուրը և ֆոսֆորային ու ազոտական սննդանյութերը։


Սևանիտները տարածված են Սևանի ավազանի որոշ ափամերձ և խորքային (մինչև 30 մ) հատվածներում։ Նախնական տվյալներով (Մ/Դ Խոտոպային հասակագրում) սևանիտները ձևավորվել են Արտանիշ թերակղզում 1.355 հազար տարի առաջ, երբ թերակղզին ջրային միջավայրում էր։

Սևանիտները բնական պահոցներ են, իսկ դրանց իզոտոպային ուսումնասիրությունները հնարավորություն կտան պարզաբանելու առաջացման ժամանակահատվածում պալեոմիջավայրի պայմանները, Սևանա լճի՝ ցիանոբակտերիաներով ծաղկման բնական պատճառները, կառաջարկվեն միջոցառումներ՝ այն չեզոքացնելու համար։

Ծրագրի նախնական ուսումնասիրություններն իրականացվել են բազային ֆինանսավորմամբ, ինչպես նաև հայ-ֆրանսիական Մոնտպելիե համալսարանի Էվոլյուցիոն գիտությունների ինստիտուտի հետ համագործակցությամբ։ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի կողմից «Միկրոբիալիթները (սևանիտներ) որպես Սևանա լճի պալեոմիջավայրի պահոցներ» ծրագիրը երաշխավորվել է ֆինանսավորման, ինչը հնարավորություն կտա շարունակելու ուսումնասիրությունները։

Այս ուսումնասիրությունը ներկայացվել է երկու գիտաժողովներում՝ Հայաստանում և Ֆրանսիայում։ Եվս մեկ գեկույց ներկայացվել է Գերմանիայի Գրեյֆալդի համալսարանում կազմակերպված աշխատաժողովում։

Ծրագրի իրականացմանը հիմնականում մասնակցում են երիտասարդ գիտնականները։ ՀՀ ԳԱՄ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ասպիրանտ Դ. Հովակիմյանը կուսումնասիրի Սևանա լճի նստվածքներում հոլոցենի դիատոմները՝ ավելի հին տեսակների հետ համեմատության համար։ Ինստիտուտի գիտխորհրդի կողմից հաստատվել է ծրագրի մասնակից Ա. Սուքիասյանի ասպիրանտական թե-



ման՝ «Սևանա լճի միկրոբիալիթների կազմը, կառուցվածքը և առաջացման երկրաքիմիական պայմանները»։ Ծրագրի շրջանակներում մագիստրոսական աշխատանք կիրականացնի ՀՀ ԳԱՄ գիտակրթական միջազգային կենտրոնի երկրաբանության ամբիոնի երկրորդ կուրսի մագիստրոս Բ. Սահակյանը՝ «Սևանի ավազանի պալեոմիջավայրի վերականգնումը ըստ նստվածքներում պալիմոնորֆների և երկրաքիմիական (XRF) անալիզի» թեմայով։

ՀՀ ԳԱՄ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Եվրոպացի գիտնականներն իրենց հայտնաբերած ...

➤2 Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի Ալպերում, միջին գոտիներում քարերի վրա աճող տեսակ է։ «Ես՝ ինքս, Հայաստանում հայտնաբերել եմ Ramalina ցեղի քարաքուսի 2 մոտ տեսակ։ Իմ գործընկերները, հաշվի առնելով այս ներդրումը, այդ մոտ տեսակն անվանակոչել են իմ անունով», - ասաց Արսեն Գասպարյանը։

Իր դոկտորական աշխատանքի ըն-



թացքում Արսեն Գասպարյանը քարաքուսերի լայնածավալ հետազոտություններ է կատարել Հայաստանի տարածքում։ «2011 թ.-ին, երբ մոտ էի սկսում իմ հետազոտությունները, ամբողջ Հայաստանից հայտնի էր քարաքուսի 422 տեսակ։ Երբ եղավ իմ դոկտորական աշխատանքի ավարտական հրապարակումը, այդ թիվը հասել էր 617-ի։ Ընդամենը մի քանի տարվա ինտենսիվ հե-

տազոտությունների արդյունքում հայտնաբերվեց քարաքուսի 195 մոտ տեսակ Հայաստանում և 5 մոտ տեսակ աշխարհում։ Սա ցույց է տալիս, որ թեթև կենսաբազմազանության ոլորտի այս կամ այն ճյուղը մի քանի տարի շարունակ ինտենսիվ հետազոտվի, տեսակների այն թվերը, որոնք մենք ունենք, մի քանի անգամ կարող են աճել», - ասաց Արսեն Գասպարյանը։

ՀՀ ԳԱՄ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի տնօրենի պաշտոնում ընտրվեց Ավետիս Ծատուրյանը

Ա.թ. հունվարի 31-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց Ավետիս Ծատուրյանը, ով մինչ այժմ կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն էր:

Ավետիս Ծատուրյանը ծնվել է 1985 թ. Աբովյան քաղաքում: 2006 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիա բաժինը: 2010 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն, որտեղ էլ կայացել է որպես գիտնական: 2019-2021 թթ. զբաղեցրել է կենտրոնի ինովացիոն և ընդհանուր հարցերի գծով փոխտնօրենի պաշտոնը, իսկ 2021 թ. հուլիսից կենտրոնի տնօրենի պաշտոնակատարն էր:

Ավետիս Ծատուրյանը ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի գիտական խորհրդի և Կենսատեխնոլոգիական հայկական ասոցիացիայի անդամ է, դասավանդում է Երևանի պետական համալսարանի ֆարմացիայի ինստիտուտի ֆարմեքիայի և ֆարմակագնոգիայի ամբիոնում:

Ավետիս Ծատուրյանը քիմիական գիտությունների թեկնածու է, 25 գիտական հոդվածի հեղինակ: Զբաղվում է ժամանակակից վերլուծական հետազոտություններով, իրականացրել է տարբեր բնույթի կենսաբանորեն ակտիվ միացությունների կառուցվածքային հետազոտություններ, որակական քանակական անալիզներ՝



ժամանակակից անալիտիկ սարքավորումներով:

Ավետիս Ծատուրյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի գիտակազմակերպական գործունեության ծրագիրը, որի իրականացման շրջանակներում նախատեսվում են հիմնարար հետազոտություններ մանրէաբանության, մոլեկուլային կենսաբանության

յան, գենոմիկայի/մետաբոմիկայի, կենսաճարտարագիտության, կենսասինթեզի և կենսակատալիզի բնագավառներում, կիրառական հետազոտություններ և տեխնոլոգիաների մշակում արդյունաբերական կենսատեխնոլոգիայի, կանաչ քիմիայի, կենսաերկրատեխնոլոգիայի, կենսավերականգնման, դեղապատրաստման արտադրության, ագրոկենսատեխնոլոգիայի և ֆունկցիոնալ սննդի բնագավառներում:

Նա նաև ներկայացրեց կենտրոնի ձեռքբերումներն իր ժամանակավոր պաշտոնավարման ընթացքում, մասնավորապես փորձաարտադրական աշխատանքներ, նոր պրոբիոտիկ հատկություններով օժտված «Նարարգին» կենսաբանորեն ակտիվ հավելման պետական գրանցում, համագործակցության հուշագիր Արցախի գիտական կենտրոնի և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի միջև, Արցախում «Նարինե Պլյուս» կենսապատրաստուկի արտադրության կազմակերպման աջակցություն, միջազգային գիտաժողովի և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը նշեց. «Ավետիս Ծատուրյանն ապացուցել է, որ կազմակերպված կառավարիչ է: Կենտրոնում իր գործունեության ընթացքում նա կարողացել է կարգավորել բոլոր հարցերը բարձր մակարդակով»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց Արսեն Գասպարյանը

ՀՀ ԳԱԱ Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Արսեն Գասպարյանը:

Արսեն Գասպարյանը ծնվել է 1983 թ.-ին Երևանում: 2001-2003 թթ.-ին անցել է պարտադիր զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում: Սովորել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում, որպես թորանոտուրան անցել է Բեռլինի Ազատ համալսարանում, պաշտպանել է «Էպիֆիտային քարաքոսերի բազմազանությունը և պահպանությունը Հայաստանում» դոկտորական թեզը: Եղել է նույն համալսարանի բուսաբանական գիտությունների «Դալեն» գիտահետազոտական կենտրոնի անդամ:

Արսեն Գասպարյանը 2007-2012 թթ.-ին աշխատել է Երևանի պետական համալսարանի բուսաբանության ամբիոնում, 2009-2016 թթ.-ին եղել է «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ-ի նախագահ, 2018 թ.-ից մասնակցել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) բնապահպանական ծրագրերում, 2020 թ.-ից ՀՀ ԳԱԱ Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտում քարաքոսերի հետազոտման ու պահպանության գիտական խմբի ղեկավարն է: Նա դասախոսում է Հայաստանի ամերիկյան համալսարանում, անդամակցում է Քարաքոսաբանների միջազգային ասոցիացիային (International Lichenological Association), Սնկերի պահպանության միջազգային միությանը (International Society for Fungal Conservation), ԱՄՆ-ի շրջանավարտների փոխանակման միջազգային ծրագրերի (US Government International Exchange Alumni) շրջանավարտ է: Արսեն Գասպարյանը կենսաբանական գիտությունների թեկնածու է, 12 գիտական հոդվածի, 2 մեմագրության, 5 թեզիսի հեղինակ: Բելգիայի Լիեժի համալսարանի գիտնականներ Էմմանուել Սերյուզիոն, Նիկոլայ Մագենյը և հոլանդացի գիտնական Պիտեր վան դեն Բուլմն իրենց հայտնաբերած քարաքոսի Ramalina ցեղի նոր տեսակն անվանակոչել են ի պատիվ Արսեն Գասպարյանի՝ Ramalina arsenii:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Նագարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում նախագծվել, պատրաստվել ու փորձարկվել է շենքերի վնասվածության աստիճանի որոշման սեյսմիկ համակարգը: Բնական պայմաններում փորձարկումների միջոցով ստացվել են տարբեր կոնստրուկտիվ համակարգերի շենքերի տատանման նոր ձևերը: Այս աշխատանքներն իրականացվել են «Շենքերի և կառուցվածքների սեյսմիկ անվտանգության գնահատման և ապահովման դիստանցիոն մոբիլ համակարգ» թեմայով ծրագրի շրջանակներում՝ ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ:

«Հայաստանում սեյսմակայուն շինարարության գիտական դպրոցը զարգանում է երկու հիմնական ուղղություններով: Առաջինը սեյսմակայունության տեսության կատարելագործմանն ուղղված հետազոտություններն են, թե որքանով են տեսական հաշվարկները, հաշվարկային սխեմաները համապատասխանում իրականությանը: Երկրորդը շենքերի բնական պայմաններում փորձարկումներն են, որոնք հնարավորություն են տալիս պարզելու շահագործվող շենքի վարքը իրական երկրաշարժի ժամանակ: Բա-

նակելի ֆոնդի տարբեր կոնստրուկտիվ համակարգերի շենքեր, որոնք գտնվում էին տարբեր գրունտային պայմաններում: Սպիտակի երկրաշարժի մակրոսեյսմիկ դիտարկումների տվյալների համակողմանի վերլուծությունը ցույց տվեց, որ եղել են դեպքեր, երբ երկրաշարժի ժամանակ հին շենքերի երկրաշարժադիմակայունությունը եղել է ավելի բարձր, քան նոր կառուցված շենքերինը: Մինչ օրս իրականացվում են հետազոտություններ՝ պարզելու ավերվածությունների հնարավոր հիմնական պատճառները: Նմանատիպ շենքերն այսօր շահագործվում են նաև Հայաստանի մի շարք խոշոր բնակավայրերում, մասնավորապես Երևան քաղաքում: Այդ պատճառով ներկայումս իրատապ է համարվում իրականացնել լայնածավալ հետազոտություններ՝ պարզելու հին և նոր շենքերի վարքը երկրաշարժերի ժամանակ», - ասաց Ջոն Կարապետյանը:

Այս համակարգը կիրառվում է շենքերի տեխնիկական վիճակի հետազոտության, վարքի ուսումնասիրման, ախտորոշման նպատակով քաղաքաշինության, բնապահպանության, ռազմաարդյունաբերության ոլորտներում: Այն կարող է օգտագործվել ռեգիոնալ կայանների, երկրաշարժերից անմիջապես հետո օջախային գոտում օպերատիվ դիտարկումների կազմակերպման, ջրամբարների պատվարների վարքի ուսումնասիրման,

Հայ գիտնականների նվաճումը սեյսմակայուն շինարարության ոլորտում



ցի այդ, դա հնարավորություն է տալիս եզրակացություն անելու շահագործվող շենքի իրական վիճակի մասին, գնահատելու վնասվածության աստիճանը» - ասաց գիտական աշխատանքների ղեկավար, ՀՀ ԳԱԱ Նագարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը:

Նա նշեց, որ շենքերը շահագործման ընթացքում ենթարկվում են բնական և տեխնածին ազդեցությունների: Դրա պատճառով շենքերում առաջ են գալիս որոշակի վնասվածության աստիճաններ, որոնք անհրաժեշտ է ժամանակի ընթացքում պարզել ու գնահատել: «Սպիտակի 1988 թ.-ի աղետալի երկրաշարժի ժամանակ ավերվեցին

վաղ ագլարարման համակարգերի մշակման նպատակով:

«Դժվար չէ նկատել, որ գիտական մշակումը ժամանակի ընթացքում դարձել է շոշափելի արդյունք, որն էլ ներդրվել է տնտեսության զարգացման գործում: Նմանօրինակ մշակումներն ունեն Ռուսաստանի Դաշնությունը, կոչվում է «СТРУХА», ճապոնական հայտնի «ОУО» ընկերությունը և այլ կազմակերպություններ: Սակայն դրանց ձեռքբերումը բավականին թանկ է», - ասաց Ջոն Կարապետյանը:

Հետազոտությունների շրջանակներում ձեռք է բերվել մշակումների հեղինակային իրավունք, արդյունքները տպագրվել են Scopus գիտական շտեմարաններում ընդգրկված միջազգային հանդեսներում, այդ աշխատանքների վրա կան բավականաչափ միջազգային հոդվածներ: Մշակված համակարգի տվյալները միջազգային մասնագետների կողմից երաշխավորվում են մասսայական կիրառության, հատկապես շենքերի վիճակի ախտորոշման, վնասվածության աստիճանի գնահատման նպատակով:

«Նմանօրինակ մշակումներ, որոնք իրականացրել է ինստիտուտի գիտական խումբը, ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք այսօր ի գործ են իրականացնելու միայն Նագարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը՝ իր գիտական պոտենցիալով ու ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատորիաներով», - ասաց Ջոն Կարապետյանը:

Աշխատանքներում ներգրավված են եղել երիտասարդ մասնագետներ, ովքեր իրականացրել են իրենց թեկնածուական աշխատանքները «Տարբեր կոնստրուկտիվ համակարգերի շենքերի դինամիկ բնութագրերի հետազոտությունները բնական պայմաններում փորձարկումներով» թեմայով, ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԽՈՂԵՐԸ ՆՐԱ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Արշիլ Գորկին կամ Ոստանիկ-Մանուկ Ադոյանը (1904-1948) XX դարի ամերիկյան գեղանկարչության նորարարներից է, որի անունը մտել է բազմաթիվ գիտական և արվեստի համրագիտարանների մեջ: Համաշխարհային գեղանկարչության մեջ Գորկին համարվում է սյուռեալիստական էքսպրեսիոնիզմի հիմնադիրը:

Հայ նկարիչն ունեցել է ծանր ճակատագիր: Երբ չորս տարեկան էր, հայրը՝ Սեդրակ Ադոյանը, թողնում է ծննդավայր Խորզոմ գյուղը և գնում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ ու հաստատվում Բոստոնի մոտ գտնվող հայաշատ Վոթերթաուն քաղաքում: Խորզոմից հեռանալուց առաջ նա իր որդուն՝ Ոստանիկին, նվիրում է տղամարդու մի զույգ մեծ տրեխներ, հետագայում Գորկու սյուռեալիստական նկարներում կարելի է տեսնել այդ տրեխները:

Գորկին փոքր քրոջ՝ Վարդուշի ու սիրելի մոր՝ Շուշանիկի հետ ոտքով երկար օրեր քայլելով հայ ցեղասպանությունից վերապրածների հետ հասնում է սկզբում հայ քրիստոնեության կենտրոն Էջմիածին, այնուհետև տեղափոխվում Երևան, որտեղ մնում է մինչև 16 տարեկանը:

Հետո իր հարազատների հրավերով մեծ գրկանքներով քրոջ հետ հասնում է սկզբում Նյու Յորք, հետո հաստատվում Վոթերթաունում:

Դեռ վաղ տարիքից Գորկին զբաղվել է նկարչությամբ և հետո նկարչական կրթություն ստացել Նյու Յորքում ու վաստակել մեծ անուն ու համարվել աշխարհի 4000 նշանավոր մարդկանցից մեկը՝ անցյալի և մեր օրերի՝ 1976-ին Լոնդոնում լույս տեսած «Dictionary of Biography to people past and present» հանրագիտարանում:

Արշիլ Գորկին իր ողջ արվեստով փորձել է վերագտնել իր կորցրած հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան, Վանը, Խորզոմը: Նրա այդ նպատակը երևում է այն նամակներում, որոնք գրել է քրոջը՝ Վարդուշին: Միաժամանակ քրոջ հետ կիսվել է նկարչության ու արվեստի մասին իր սեփական փիլիսոփայական խոհերով, որոնք հիացնում են իրենց իմաստուն խորությամբ և կարող են ուղեցույց դառնալ ապագայի բոլոր ազգերի նկարիչների համար:

Հարցին, թե ինչու Ոստանիկ-Մանուկ Ադոյանը դարձավ Արշիլ Գորկի՝ նրա կենսագիրները տվել են հետևյալ բացատրությունը: Արշիլ Գորկին անցել էր ցեղասպանության Գողգոթան, որի սարսափազդու տեսարաններն ուղեկցեցին նրան ողջ կյանքում: Նա կամենում էր իր արվեստով մերժել այդ անարդարությունը, և 16 տարեկան Ոստանիկը նոր անուն ու ազգանուն է փնտրում իր համար՝ Գորկի՝ որպես ռուս մեծ գրողի զարմիկ և Արշիլ՝ որպես հայ Արշակունի թագավորական դինաստիայի շառավիղ: Կարծիք կա նաև, թե Գորկին Arshile անունով իրեն նմանեցրել է Հոմերոսի «Իլիականի» գլխավոր հերոսին՝ Աքիլլեսին:

Բոլոր դեպքերում նա հասել է իր նպատակին: Նրա նկարները հիմա ցուցադրվում են աշխարհի ամենահայտնի պատկերասրահներում: Ես տեսել եմ դրանք Միացյալ Նահանգների Նյու Յորքի, Լոս Անջելեսի, Նյու Ջերսիի, Վաշինգտոնի, Ֆիլադելֆիայի, Սան Ֆրանցիսկոյի, Փարիզի ժամանակակից արվեստի՝ George Pompidou-ի անվան, Լոնդոնի ժամանակակից արվեստի՝ Tate, Մադրիդի ժամանակակից արվեստի և այլ թանգարաններում:

Գորկին իր նամակներում երագում էր, որ վերագտնելու է իր ծննդավայր Խորզոմը, Վանը, Աղթամարի վանքը, հայրենիքը: Նա հասել է իր նպատակին, որովհետև նրա նկարների տակ գրված է, որ նա ծնվել է Հայաստանում, նույնիսկ գրված է Խորզոմ գյուղի անունը:

Արշիլ Գորկու նամակներին կատարած մեր անդրադարձը հիմքում ունի համեմատական մեթոդը: Ինձ շատ հայտնի են միջնադարյան հայ մանրանկարիչների գործերը: Եղել են Վանում, նրա շրջակայքի նախկին հայկական գյուղերում, երկու անգամ տեսել Աղթամար կղզու վրա գտնվող Սուրբ Խաչ եկեղեցին, Վարազդ վանքը: Իմ տանը կախված են Թորոս Ռուսիկի մանրանկարների կրկնօրինակները: Հայ մանրանկարների կրկնօրինակներ են փակցված նաև Հայ հին և միջնադարյան գրականության ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պատերին, որը ղեկավարում են:

Գորկին խոստովանում է, որ իր վրա մեծ ազդեցություն են թողել Պաբլո Պիկասոյի և Պոլ Սեզանի գործերը: Նա խոսում է նաև ժան Միրոյից, Վասիլի Կանդինսկուց կրած ազդեցությունների մասին: Այդ նկարիչների գործերի մեծագույն մասը տեսել եմ Բարսեղյանում, Վաշինգտոնում, Փարիզում, Մադրիդում, Լոնդոնում, Բոստոնում, Մոսկվայում, Հարթֆորդում, Բուենոս Այրեսում և այլուր: Եղել են ժան Միրոյի, Պաբլո Պիկասոյի, Կլոդ Մոնեի տուն-թանգարաններում: Այս նախնական գիտելիքները նպաստում են Արշիլ Գորկու արվեստի փիլիսոփայությունը ճշգրիտ հասկանալուն:

2005 թվականին Երևանում հրատարակվում է Արշիլ Գորկու նամակների հայերեն թարգմանությունը՝ անվանի արվեստագետ Շահեն Խաչատրյանի փաստահարուստ առաջաբանով:

Գորկու նամակներն սկսվում են 1937-ից և ավարտվում 1948-ին:

Նկարիչն իր արվեստի ներկայացուցիչ ձևավորվելու գործում մեծ տեղ է հատկացնում անասինման սիրելի մորը՝


Շուշանիկին, որը քահանայի աղջիկ էր, հավատարիմ էր մարդասիրական ու քրիստոնեական սրբություններին և վախճանվեց Երևանում սովից հողե հատակով մի խրճիթի մեջ, որդուն իր ամուսին Սեդրակին ուղղված նամակը թե-լադրելիս:

Ահա թե ինչ է գրում M.Lader-ը տիկին Շուշանիկի՝ որդու վրա ունեցած ազդեցության մասին՝ ըստ Գորկու խոսքերի. «Մորս մտքերն այնքան ճշգրիտ էին, այնքան արժեքավոր կյանքի բազում բնագավառների, հատկապես բնության վերաբերյալ...Մայրս գեղագիտության բանաստեղծուհին էր: Մայրս գեղագիտության բնագավառում թագուհի էր»:

Նկարչի մայրը պաշտում էր բնությունը և գեղեցկությունը: Նա որդուն սովորեցնում էր, որ հպարտ լինի հայ ծնվելու համար:

Գորկու նամակներում տեսնում ենք արվեստի նկարչական բնագավառում նրա ունեցած առաջընթացը:

Արվեստի և կյանքի փոխհարաբերության խնդիրները փիլիսոփաները քննել են անտիկ ժամանակներից: Այս ա-



ռունով հետաքրքիր դիտարկումներ կան հինգերորդ դարի վերջի և վեցերորդի սկզբի նշանավոր հայ փիլիսոփա, նորալատոնական փիլիսոփայության Արիստոտելյան ուղղվածության փայլուն ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի «Փիլիսոփայության սահմանումները» կոթողային աշխատության մեջ: Միջնադարի հայ փիլիսոփա համեմատության մեջ է դնում մարդու մտավոր գործունեության երկու կարևոր բնագավառները և մտահանգում. «Արդ, ինչպես քիչ առաջ ասացինք, արվեստն ու գիտական իմացումը իրարից տարբերվում են նրանով, որ գիտական իմացումը անսխալ է և իր էությանը, և իր ենթակայով, իսկ արվեստն անսխալ է իր էությանը, բայց իր ենթակայով սխալական է թվում»: Անհաղթը նշում է, որ արվեստի առարկան կարող է լինել նաև վերացականը, իսկ առարկայական աշխարհը շարունակ փոփոխության մեջ է, հոսանուտ է ինչպես արվեստի, այնպես էլ գիտության համար:

Գորկին էլ արվեստի փոփոխական լինելու մասին ասում է. «Սիրելիներս, ումանք ասում են, թե արվեստը հավերժական է, թե այն երբեք չի փոփոխվում: Հիմարություն: Արվեստը փոփոխվում է: Մարդն է փոփոխվում: Մարդը փոխում է աշխարհը և դրա հետ միասին՝ նաև իրեն ու իր արվեստը: Սա է իմ հիմնական տեսակետը: Կարծում եմ, որ դա օբյեկտիվ ճշմարտություն է և ոչ իմ սուբյեկտիվ մոտեցումը»:

Գորկու կարծիքով ամեն մի նկարիչ, քանդակագործ իր հետ բերում է սեփական ժողովրդի արվեստի տարրերը: Նա շատ կարևոր է համարում հին քաղաքակիրթ աշխարհի նվաճումները՝ ուրարտացիների, շումերների, խեթերի, եգիպտացիների, հույների: Նրա կարծիքով ամեն մի ճշմարիտ արվեստագետ պետք է տեղյակ լինի անցյալի արվեստին:

Նամակներում հատկապես հաճախ է խոսվում Պիկասոյի աշխարհընկալման և նկարչական արվեստի մասին. «Հետևաբար կուրբզը ոչ թե սկիզբ է առնում Բրաքից և Պիկասոյից, այլ իր գազաթնակետին է հասնում նրանց արվեստում: Պիկասոն այժմեականացրել է կուրբզը՝ այն կապելով ուրբանիզացիայի և ներկայիս տեխնոլոգիայի առաջադիմական դարի հետ»:

Գորկին հիմնալի գիտեր հայ միջնադարի մանրանկարչությունն ու ճարտարապետությունը: Նրա սիրելի հայ նկարիչներն էին Կիլիկիայում գործած Թորոս Ռուսիկը (XIII դար I կես) և Սարգիս Պիծակը (XIV դար I կես): Մեծ նկարիչը համոզված է, որ Հայաստանն աշխարհին տվել է մեծ նկարիչներ, որոնց, ցավոք, աշխարհը չի ճանաչում. «Մի՞թե

զարմանալի է, որ ունենալով այդպիսի գեղեցկություն՝ Հայաստանը տվել է այդքան շատ նկարիչներ: Ոչ, զարմանալին այն է, որ նրանց չեն ճանաչում մեր հայրենիքից դուրս: Թորոս Ռուսիկը ինքնին Վերածնունդն է: Ինչպիսի ուժ է բուսանդակում այդ մարդը: Ինձ համար նա ամենախոշոր նկարիչն է, որ տվել է աշխարհը մինչև ժամանակակից դարը, և միայն կուրբզը կարողացավ գերազանցել տարածության նրա ընկալումը»: Նկարիչը մտահոգ է արվեստի ընկալման խնդիրներում: Մարդը սիրում է այն, ինչը հասկանում է: Նկարիչը ստեղծում է իր անձնական փորձի հիման վրա, սակայն նույնքան կարևոր է նաև մխրճվելու ուրիշի փորձի մեջ ու դրանք միացնել իրար:

Սեփական փորձի արմատը Գորկին տեսնում է իր ծննդավայր Խորզոմում և Վանում: Նա կարոտում է իր մայրության վայրերին, հայկական ծիրանին, որի բույրը, համը, հոտը զգում է հեռավոր Ամերիկայում: Կարոտում է Վանա լճի աղի ծերմակ ափերը, սիրելի դաշտավայրերը և այնտեղ ապրող կենդանիներին: Նա միշտ իրեն համարել է իր հայրենիքի մի մասնիկը, որը գարշելի փոթորիկների պատճառով շատ հեռու է շարտվել: Ահա մեծ նկարչի արվեստի դավանանքը, որը նա կարողացավ իրականացնել. «Մեր գեղեցիկ Հայաստանը, որ մենք կորցրեցինք, և որը ես կվերագտնեմ իմ արվեստում: Իմ արվեստում միշտ էլ կլինի հայոց ոգին: Ես իմ վրձնով կվերակենդանացնեմ Հայաստանն ամբողջ աշխարհի համար, ու երբ բոլորս հող դառնանք, գուցե նրանք ասեն. «Որպես հայոց լեռների որդի, նա իր համետ ավանդը ներդրեց համաշխարհային մեծ մշակույթին, և ինչպես մեր բանաստեղծներն են երգում. «Գետին զարկի գինու ոսկյա գավաթ, որ իմ պապակ շուրթերը կարողանան խմել»:

Նկարիչն իրոք հրաշալի գիտեր Վերածննդի նկարիչներին, քանդակագործներին, նաև ճարտարապետներին: Նա իր արվեստի առաջին շրջանում մոտ էր նրանց ռեալիզմին, ինչպես նաև ֆրանսիական իմպրեսիոնիստներին: Բավական է հիշել 1924-ին նրա նկարած Park Street Church Բոստոնի եկեղեցու երկնագույն քողի միջից երևացող իմպրեսիոնիստական նկարը: Այդ տարիներին նա հաճախ էր գնում Բոստոնի շատ հարուստ Museum of Fine Arts, որը հարուստ էր այնպիսի նշանավոր իմպրեսիոնիստ նկարիչների կտավներով, ինչպիսիք են Մոնեն, Ռեմբրանտը, Ալֆրեդ Սիսլին, Կամիլ Պիսարոն և Էդգար Դեգան:

Նրա նամակներում երևում է քաջ ծանոթությունը այնպիսի տիտանների արվեստի գործերին ու կյանքին, ինչպիսիք էին Լեոնարդո դա Վինչին և Միքելանջելոն:

Արվեստի նորարար է նաև XX դարի երկրորդ կեսի հանճարեղ նկարիչ ու քանդակագործ Երվանդ Քոչարը, որի երիտասարդական տարիներն անցել են Փարիզում: Բարեբախտաբար նրանցից մեզ են հասել մի շարք հողվածների ու ելույթների տպագրություններ, որոնք չափազանց արժեքավոր են: Քոչարն ասում է. «Վախեցեք հանգցնել ձեր հոգու կրակը, որ տարբերում է մարդուն զազանից»: Հետաքրքիր է, որ նա էլ Գորկու նման Պոլ Սեզանին համարում է իր ուսուցիչը, իսկ Պիկասոյի նկարներում տեսնում է Լեոնարդոյի ֆորմայի տեսողական կառուցումը:

Մյուրեռեալիզմը մի առանձին տրապուրանք է ունեցել Գորկու նկարչական արվեստում:

Մյուրեռեալիզմի մանիֆեստը 1924 թվականին հրապարակեց Անդրե Բրետոնը, որը մասնագիտությամբ բժիշկ էր: Մյուրեռեալիզմն իր շուրջը համալսմանք նշանավոր ու երիտասարդ բանաստեղծների՝ Պոլ Ելյուարին, Լուի Արագոնին և ուրիշների: Լուի Արագոնը «Le Paysan de Paris»-ում հենց նույն՝ 1924-ին, գրեց. «Ահա միտքը գլխավոր շրջող մեքենան... Գերիրապաշտությունը զառանցանքի ու խավարի որդին է» : Հետագայում Արագոնը հեռացավ սյուռեալիստներից:

Անդրե Բրետոնը շատ հավանում էր Գորկու նկարները և գրեց կարծիք նրա ցուցահանդեսի համար, երբ վերջինիս նկարները ցուցադրվեցին Joulieu Levy պատկերասրահում: Անդրե Բրետոնը (1896-1966) թողեց բժշկությունը և սկզբում հարեց դադաիզմին, այնուհետև անցավ սյուռեալիզմին:

1944-ին կամ 1945-ին Գորկին և Բրետոնը վերջապես հանդիպում են ու դառնում լավ ընկերներ՝ չնայած այն փաստին, որ Բրետոնը չէր խոսում անգլերեն, իսկ Գորկին՝ ֆրանսերեն: Պետք է նշել, որ Բրետոնը հիմնալի հասկանում և գնահատում էր Գորկու նկարելու մեթոդը:

Գորկին փիլիսոփա նկարիչ է, և նրա կտավներում մարդկային կյանքի տարբեր բնագավառները ստեղծված են քաղաքական այնպիսի մեթոդներով, որոնք հասկանալի են միայն կրթված մարդկանց: Դա, իհարկե, չի վերաբերում ֆոտոնկարի հիման վրա ստեղծված իր և մոր նկարին, որը պատկերում է 12 տարեկան Արշիլին ու նրա գեղեցիկ ու խորիմաստ աչքեր ունեցող մորը: Այդ ֆոտոնկարի հիման վրա նկարիչը վրձնել է մի քանի տարբերակներ՝ տարբեր տարիների: Նկարը ներգործող ուժ ունի և մի անգամ տեսնելուց հետո տպավորվում է դիտողի հիշողության մեջ ընդմիշտ: «Համճարը աքսորում» հողվածում Դորմենթը նկարագրում է Շուշանիկի և Ոստանիկի ջերմ կապվածությունը: Մայրը փոքրահասակ որդուն իր հետ միշտ տանում էր եկեղեցի: Տղան, դիտելով եկեղեցու պատերին եղած

XIX դարի վերջի - XX դարի հայ իրակա-նության մեջ իր արժանավոր տեղն ունի Լի-սիցյան գերդաստանը: Նրանց տաղանդավոր ու վառ ներկայացուցիչներից էր հայրենիքի և հայ մշակույթի նվիրյալ, ազգագրագետ, բանասեր ու պատմաբան Լևոն Լիսիցյանը: Նա ծնվել է Թիֆլիսում 1892 թ. հունվարի 9-ին: Մանուկ հասակից փայլուն ընդու-նակություններ է դրսևորել ուսման մեջ և ե-րաժշտության ասպարեզում. ոսկե մեդալով ավարտել է Թիֆլիսի N 1 գիմնազիան և զու-գահեռ՝ տեղի երաժշտական ուսումնարանի ջութակի բաժինը: Ի դեպ, աշակերտական մի համերգի ժամանակ, երբ Լևոնը հանդես է ե-կել Մենդելսոնի կոնցերտի կատարմամբ, նշանավոր ջութակահար Դովհաննես Նալ-բանդյանը բեմ է բարձրացել, գրկել պատա-նուն, շոյել գլուխը և ասել. «Դու իսկական ջութակահար կդառնաս, երբեք չթողնես ջու-թակը».: ականջալուր լինելով պատգամին՝ Լ. Լիսիցյանը երբեք չնուսացավ այդ գործիքը, շարունակեց ջութակ նվագել:



Ն. Մառի մոտ: Միաժամանակ ջութակի դասեր է առնում հայտնի ջութակահար Լ. Լուերի մոտ:

Լ. Լիսիցյանը Պետրոգրադում ծանոթա-նում է Զնչակյան կուսակցության հիմնադիր-ներ Մարո և Ավետիս Նազարբեկյանների դստեր՝ Զեդինեի (Ելենա) հետ, ով սովորում էր տեղի կոնսերվատորիայում, և Թիֆլիսում 1919 թ. ամուսնանում:

Մինչ այդ՝ 1917 թ., Լ. Լիսիցյանը զորակոչ-վում է Թիֆլիսի սպայական հետևակային դպրոցում սովորելու: Իր փայլուն ընդունա-կությունների շնորհիվ ավարտելուց հետո նշանակվում է նույն դպրոցի ուսուցիչ: Երբ Կովկասը անջատվում է Ռուսաստանից, Լ. Լի-սիցյանին հայկական կառավարության կող-մից առաջարկվում է հիմնել ենթասպայական դպրոց: Այս պարտականությունը նրան թե-լադրում է հայերենի վերածել զինվորական ծառայության և վարժությունների ուղեցույց դասագրքերը և հրաձագանակները տեղի-նուղղից, 1918 թ. հրատարակում է «Հրա-

կոմիսար Աշոտ Դովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 28-ի կարգադրությամբ Լ. Լիսիցյանին հանձնարարվում է Կուլտուր-պատմական ինստիտուտի գործերն իր հա-ջորդին՝ Լ. Սարգսյանին, փոխանցելու և Երևանի պետհամալսարանում դասախոսա-կան աշխատանքի անցնելու մասին:

Եվ, սակայն, Լ. Լիսիցյանին վիճակված չէր շարունակել իր աշխատանքները. ընդա-մենը 29 տարեկան հասակում ողբերգորեն զոհվել է 1921 թ. փետրվարյան քաղաքա-ցիական կռիվների օրերին: «Փետրվարյան հեղաշրջման միջոցին ինստիտուտի հիմ-նարկությունները պաշտպանելու համար զինված (Լ. Լիսիցյանը- Ա. Ջ.) դուրս է գա-լիս և նույն օրը՝ բանտարկվում է, իսկ հա-ջորդ օրը՝ փետրվարի 18-ի գիշերը, մի հար-բած խումբ, հավանորեն մուկ թելադրանք-ներից մղված, հարձակվում է բանտի վրա և մի ուրիշ բանտարկվածի հետ միասին բռնություն դուրս են բերում բանտից և վերջ դնում նրա երիտասարդ կյանքին»,- գ-րում է Ս. Տեր-Յակոբյանը:

Դովի. Թումանյանը 1921 թ. ապրիլի 8-ին Երևանից Թիֆլիս՝ զավակներին գրած նամակում հայտնում է. «Չգիտեմ, արդյոք տեղեկություն է հասել Թիֆլիս խեղճ Լևո-նի-Լիսիցյանի սպանության մասին, թե չէ: Չեք կարող երևակայել, թե ինչպես շանթա-հարեց ինձ նրա սպանության պատմությու-նը: Փետրվարի 18-ին, հեղաշրջումի օրը, հրացան է առել, դուրս եկել փողոց (Էջ-միածնում): Զրացան է արձակել, մի սա-սունցու թևը վիրավորել ու փախել մտել Դովի. Դովհաննիսյանի (խոսքը Էջմիածնի զինագիշայի վերատեսուչ, բանաստեղծ Դովի. Դովհաննիսյանի մասին է - Ա. Ջ.) տու-նը: Եկել են էնտելից տարել բանտարկել, իսկ մյուս օրը բանտից հանել ու տարել մոր վեհարանի առաջ սպանել:

Խեղճ Ստեփան, խեղճ տիկին Կա-տարինե: Էլ նրանք ի՞նչպես են ապրելու: Խեղճ Լևոն, էնքան ջանել, էնքան պատ-րաստված ... (ընդգծումը մերն է - Ա. Ջ.):»:

Առնելով Լ. Լիսիցյանի ողբերգական մահվան բոթը՝ 1921 թ. սեպտեմբերի 14-ին Ավետիք Իսահակյանը Ազոլոյից Վարդգես Ահարոնյանին գրել է. «Լսեցի, որ Լիսիցյա-նի տղան (Լևոնը - Ա. Ջ.) սպանված է Երևա-նում (Էջմիածնում - Ա. Ջ.), շա՛տ ցավեցի, սիրուն տղա էր և պատրաստված (ընդգ-ծումը մերն է - Ա. Ջ.): ավստ՛ի, որ երիտա-սարդ ուժերը զոհ են գնում անգութ հանգա-մանքներին. հեղափոխական Մոլոխը շա՛տ զուր գոհեր է տանում. Աստված իմ, ե՞րբ պիտի վերջանա այս արյան բաղանիքը»:

Լ. Լիսիցյանի անժամանակ ու ողբերգա-կան մահը խորապես ցնցել է նաև նրա հետ դեռևս պատերազմի տարիներից մտերիմ, այնուհետև «Համաշխարհային պատերազ-մից հայ ժողովրդի կրած վնասների թմինչ հանձնաժողովի» ռազմապատմական բաժ-նում և Մայիլյան եղբայրների գիտատնտե-սական արշավախմբի կազմում համատեղ գործունեություն ծավալած, հայ ժողովրդին բոլորանվեր ծառայած ռուս գեներալ-բա-նաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինին: Իր ե-րիտասարդ ընկերոջ ու բարեկամի մահվան տարելիցին նա գրում է զգայացունց բա-նաստեղծություն և ընծայագրով նվիրում Լ. Լիսիցյանի կնոջը: Ահա այդ բանաստեղ-ծության վերջին երկու քառատողը.

ПАМЯТИ ЛЕВОНА ЛИСИЦИАНА
(19/II 1921 г.)

... Но нет! ты жив: твой подвиг налицо.
Ты жив, герой! я в смерть твою не верю.
Ты залатил собою Року — зверю,
Но от тебя осталось дерево.

Ты из зерна на вспаханном пути
Вспоил росток его грядущей жизни.
Его плоды оценятся в отчизне,
И ты ее за кровь твою... прости!...

Ի դեմս Լ. Լիսիցյանի՝ հայ ժողովուրդը կորցրեց ըստ ամենայնի պատրաստված մտավորականի, որի համար Զայաստանի մշակույթի նկատմամբ անսահման սերն ու նվիրվածությունը եղան նրա կարճատև կյան-քի իմաստը:

Անուշավան ԶԱՔՐԱՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

ՄԵՐ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ

ԼԵՎՈՆ ԼԻՍԻՑՅԱՆ- 130

1909 թ. Լ. Լիսիցյանը մեկնում է արտա-սահման և ընդունվում Մյունխենի համալսա-րանի փիլիսոփայական ֆակուլտետ, մեկ տարի անց փոխադրվելով Մոսկվա՝ ընդուն-վում է տեղի համալսարանի պատմաբանա-սիրական ֆակուլտետ: Եվ, սակայն, շուտով՝ 1910 թ., տեղի ունեցած ուսանողական ցույ-ցերին և Յասնայա Պոլյանայում Լև Տոլստոյ-ի թաղմանը մասնակցելու համար շատերի թվում հեռացվում է համալսարանից: Չերքա-կալությունից խույս տալու և ուսումը շարու-նակելու նպատակով կրկին մեկնում է արտա-սահման և 1911-1914 թթ. սովորում է Վիեննա-յի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում: Այստեղ նա չփվում է Միսի-թարյան միաբանության հայրերի հետ, պա-րապում նրանց գրադարանում, ուսումնասի-րում հայկական մատենագրական աղբյուր-ները: «Իր բարեմասնություններով» վայելում է Միսիթարյանների համակրանքը:

Երիտասարդ Լիսիցյանը բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, առանձնա-պես ընդունակություն է դրսևորում գիտահե-տազոտական աշխատանքների ոլորտում. հետաքրքրվում էր հայկական ճարտարապե-տությամբ, սոցիոլոգիայով, աշխարհագրոթ-յամբ, տնտեսագիտությամբ: Տիրապետում էր մի քանի լեզուների. ազատ խոսում էր ռուսե-րեն և գերմաներեն, գիտեր գրաբար, ֆրան-սերեն, լատիներեն, անգլերեն, վրացերեն, ու-սումնասիրում էր հունարեն, արաբերեն, նաև՝ սանսկրիտ, թուրքերեն: Զետաքրքրություննե-րի այդ լայն շրջանակով ու բանիմացությամբ՝ համալսարանում գրավում է ավստրիացի հայտնի գիտնական, պատմության և ճար-տարապետության պրոֆեսոր Յո. Ստրոմ-գովսկու ուշադրությունը. վերջինս նրան հրա-վիրում է դիտահետազոտական աշխատան-քի համալսարանին կից գործող Արվեստնե-րի պատմության ինստիտուտում, դառնում է հայկական մշակույթի հարցերով նրա խորիդ-դատուն: Յո. Ստրոմգովսկին մեծ հույսեր էր կապում Լևոնի հետ. դեռևս 1913 թ. ասում էր, որ նրանից «դուրս պիտի գա մի կարևոր գի-տական ուժ», և հայ ճարտարապետության տեսության ու պատմության մի շարք խնդիր-ների լուծումը կապում էր նրա հետ:

Լ. Լիսիցյանը նպաստում է Յո. Ստրոմ-գովսկու և նշանավոր ճարտարագետ-ճար-տարապետ Թորոնս Թորանմայանի միջև կա-պերի ստեղծմանը. վերջինս «Տեկորի տաճա-րը» և «Էջմիածնի տաճարը» աշխատություն-ների՝ իր կատարած գերմաներեն թարգմա-նությունները Ստրոմգովսկուն ներկայացնե-լը հիմք է հանդիսանում նրանց անձնական ծանոթությանը ու հետագա համագործակ-ցությանը հայոց ճարտարապետությունը Եվ-րոպային ծանաչելու դարձնելու գործում:

Լ. Լիսիցյանի խորհրդով ու աջակցութ-յամբ, հոր՝ Ստ. Լիսիցյանի ջանքերով հավաք-ված նյութական միջոցներով 1913 թ. ապրի-լի 16-ին Թ. Թորանմայանը գալիս է Վիեննա: Զայոց դարավոր ճարտարապետության պատմության ու տեսության իր խորունկ իմա-ցությամբ նա որոշ ժամանակ պարապում է Արվեստների պատմության ինստիտուտում, խրախուսում, արագացնում է ինստիտուտի կողմից գիտական արշավախմբի կազմակեր-

պումը և այցը Զայաստան:

Արշավախումբը, Ստրոմգովսկու գլխավո-րությամբ, արվեստաբան, դոկտոր, պրոֆե-սոր Զեմրիխ Գլյուկի, ազգագրագետ Էդմոնդ Գյուլտերի, Լիսիցյանի մասնակցությամբ և Թ. Թորանմայանի առաջնորդությամբ 1913-ի սեպտեմբեր-հոկտեմբերի սկզբին Զայաստա-նում զբաղվում է գիտական մի շարք հարցե-րի մշակումով: Նրանք այցելում են Ալեք-սանդրապոլ, Մարնաշեն, Զառիճ, Քասախ, Աշ-տարակ, Եղվարդ, Գառնի, Գեղարդ, Էջմիածին և այլ վայրեր, ծանոթանում, լուսանկարում, չափազորում ճարտարապետական հուշար-ձաններ: Այդ ընթացքում Լ. Լիսիցյանը և՛ թարգմանիչ էր, և՛ վիմագրեր վերծանող:

Վիեննայում Լ. Լիսիցյանը հավաքված նյութերը սկսում է մշակել ու դասդասել: Այն-քան կարևոր ու ծանրակշիռ է եղել Լիսիցյա-նի ներդրումը դրանց գիտական մշակման գործում, որ հետագայում՝ 1918 թ., Վիեննա-յում գերմաներեն լույս տեսած «Հայերի ճար-տարապետությունը և Եվրոպան» ծավալուն երկիատոր աշխատության տիտղոսաթերթի վրա Յո. Ստրոմգովսկին Թ. Թորանմայանի և Զ. Գլյուկի աճունների կողքին հիշատակել է նաև Լ. Լիսիցյանին: Ինչպես հայտնի է, աշ-խատությունը խոշոր ներդրում էր հայկական ճարտարապետության ուսումնասիրման գոր-ծում, նրանում հետևողականորեն առաջ է քաշվում և հիմնավորվում հայկական ճար-տարապետության ինքնուրույնության տեսա-կետը, որը մինչ այդ ժխտվում էր եվրոպացի որոշ գիտնականների կողմից:

Սկսվեց Առաջին համաշխարհային պա-տերազը. Լ. Լիսիցյանը, անավարտ թողնե-լով գիտական աշխատանքները, գրքերը, ձե-ռագրերը, իբրև ռուսահպատակ հարկադր-ված էր թողնել Վիեննայի և օգոստոսի կեսե-րին ճանփա ընկնել դեպի Թիֆլիս: Որոշ ժա-մանակ անց նա շտապում է Զայաստան. որ-պես կամավոր մեկնում է ռուս-թուրքական ռազմաճակատ՝ նախ որպես 5-րդ, 1915 թ.՝ 2-րդ կամավորական ջոկատի զինվոր: Զայ գաղթականներին օգնություն ցույց տալու նպատակով 1914 թ. դեկտեմբերին Էջմիած-նի Մայր Աթոռին առընթեր կազմակերպվում է Զայ գաղթականների եղբայրական օգնութ-յան գլխավոր կոմիտե: Այն ուներ իր ենթակո-միտները Երևանում, Թիֆլիսում և Անդրկով-կասի այլ վայրերում: Լ. Լիսիցյանը նշանակ-վում է կոմիտեի լիազոր-ներկայացուցիչ Բա-յազետում: Նա լինում է Էջմիածնում, Իզդի-րում, Դիադինում, Սարիղամիշում, ակամա-տես դառնում ժողովրդին վիճակված ողբեր-գությանը՝ ամենուրեք գործադրելով օգնութ-յան ամենուրազ ջանք ու եռանդ: Բայազետի շրջանում Լ. Լիսիցյանը հավաքում է ազգագ-րական բնույթի նյութեր, մամուլում գիտական բանավեճ մղում լեզվաբանության հարցերի շուրջ, կատարում հայկական ճարտարապե-տական հուշարձանների մասին համառո-տագրություններ:

Բժավոր տիֆով հիվանդանալն անհնար է դարձնում ռազմաճակատում Լ. Լիսիցյանի մնալը: Ապաքինվելուց հետո նա վերադառ-նում է Թիֆլիս, ապա մեկնում է Պետրոգրադ՝ իր վաղեմի երազանքը իրագործելու համար, այն է՝ ուսանել մեծ հայագետ ու գիտական

հանգ զինվորական վարժությունների» գիր-քը:

Որպես Զայաստանի աշխարհագրության և պատմության գիտակ անձ՝ արձակվելով զինվորական ծառայությունից, 1918-ին Զա-յաստանի կառավարության կողմից Լ. Լիսիցյանը նշանակվել է Պոլսի կոնֆերան-սին ուղարկված պատգամավորության կցորդ. պատրաստել է պատգամավորության տված հուշագրին կցված Զայաստանի սահ-մանների մասին պատմական ակնարկը:

1918 թ. տեղեկանալով Սարիղամիշին սպառնացող վտանգի մասին՝ Լ. Լիսիցյանը «ինքնաբերաբար հայտնում է Երևանի կառա-վարության իր ծառայելու պատրաստակա-նությունը և նշանակվում է Սարիղամիշի 4-րդ զնդի սպա: Ամմիջական վտանգի վերացու-մից հետո Լիսիցյանին արձակուրդ է տրվում»:

1918 թ. դեկտեմբերի 19-ին պողպորուչիկ Լ. Լիսիցյանը դիմում է Դովի. Թումանյանի դե-կավարությամբ գործող «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասնե-րի թմինչ հանձնաժողովին»՝ առաջարկելով իր մասնակցությունը դրա աշխատանքնե-րին: Մինչև 1920 թ. Լ. Լիսիցյանը բոլորանվեր գործունեություն է ծավալում ռազմապատ-մական բաժնում որպես քարտուղար: Այդ պաշտոնում նա հատուկ աշխատություն է պատրաստում՝ «Հայերի մասնակցությունը 1914-1918 թթ. համաշխարհային պատե-րազմին: Ռազմա-պատմական տեսություն: Նախնական ծանոթություն» վերնագրով:

1919-1920 թթ. Լ. Լիսիցյանն ակտիվո-րեն մասնակցում է Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական արշավախմբի աշ-խատանքներին: Արշավախմբի պատվերով իր հոր՝ Ստ. Լիսիցյանի հետ սկսել էր ընդարձակ հետազոտություն՝ «Աշխարհագ-րության ազդեցությունը Զայաստանի պատմության, մշակույթի և երկրի ազգաբ-նակչության հոգեբանության վրա»: Արշա-վախմբի ստեղծման, նրա առջև դրված խնդիրների ու նպատակների, կատարված աշխատանքի մասին նա նաև գրում է ամ-փոփ տեղեկատվություն՝ «Տեսություն գոր-ծունեության «Մայիլյան եղբայրների գի-տական-տնտեսական արշավանքի ի Զա-յաստան» առ 1-6 հունվարի 1920 թվի» վեր-նագրով բովանդակալից նյութը:

Խորհրդային կարգերի հաղթանակից հետո չլինելով կուսակցական Լ. Լիսիցյա-նը դառնում է նորաստեղծ իշխանության ջերմ պաշտպաններից մեկը: Նա ազատ-վում է զինվորական ծառայությունից և նշանակվում էջմիածնի կուլտուրական հիմ-նարկությունների (թանգարան, մատենա-դարան, տպարան) կոմիսար. այստեղ նա ցույց է տալիս պաշտամունքի հավասար սեր և հոգածություն բոլոր այն պատմա-կան-կուլտուրական արժեքներին, որոնք ժամանակի ընթացքում հավաքված էին այդ հնավայրում: Իսկ երբ հիմնվում է Կուլտուր-պատմական ինստիտուտը, որ Լիսիցյանի վաղեմի փափագն էր եղել, նշանակվում է ինստիտուտի կուլեգիայի անդամ և թանգա-րանի վարիչ:

ԶՆՍԶ լուսավորության ժողովրդական

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի հայտնաբերած դեղամիջոցները ներդրվում են բժշկական կլինիկական պրակտիկայում

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի (ՕԴԶԳԿ) նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում հետազոտվում են մեյորոտրոպ միացություններ, ինչի արդյունքում բժշկական կլինիկական պրակտիկայում ներդրվել է հակաէպիլեպտիկ դեղամիջոց Պուֆեմիդը: Մեկ այլ դեղամիջոց՝ պոտենցիալ տրանկվիլիզատոր Պիրատիդինը, գտնվում է մախակլինիկական փորձարկման փուլում: Համակողմանի և խոր ուսումնասիրման է ենթարկվում նոր ինքնատիպ դեղամիջոց՝ N3212-ը, որն ունի հակաէպիլեպտիկ և համակցված հոգեմետ արտահայտված հատկություններ: Պուֆեմիդի, Պիրատիդինի, դեղապրեպարատ N3212-ի ուսումնասիրությունները և վերջին տարիներին բացահայտված միացությունները կարող են հետագայում կիրառություն ունենալ որպես նոր դեղամիջոցներ՝ մեյորոտրոպ հատկություններով՝ ինչպես էպիլեպսիայի, այնպես էլ ճկողնների և մանկակալ-դեպրեսիվ սինդրոմի բուժման ժամանակ:

ՕԴԶԳԿ-ում հակացնցումային և հոգեմետ հատկությունների հայտնաբերման ուղղությամբ ուսումնասիրվել են տարբեր քիմիական խմբերի պատկանող ծծումբ, ազոտ և թթվածին պարունակող նոր միացություններ՝ պիրանոտրիագոլոպիրիդինների ածանցյալներ, պիրանոպիրիդոթենո-տրիագոլինների, թենոտրիագոլիդոլիսինոլինի, տինոնպիրիդինների, պիրիմիդինների ածանցյալները, հիդանտոինների ածանցյալները և նրանց լիթիումական աղերը: Միացությունների հետազոտությունը իրականացվել է կորագոլային (պենտիլենտետրագոլ, որն օգտագործվում է որպես ցնցումային միջոց էպիլեպսիայի փոքր նոպաների ստեղծման համար) թեստով, որն առաջնային ընտրության մոդել է ինչպես էպիլեպսիայի, այնպես էլ անքսիոլիտիկ (տրանկվիլիզատոր հակավախային) կանխատեսվող հատկությունների բացահայտման համար՝ օգտագործելով սպիտակ մկներ: Առավել ակտիվ՝ 60-80%, թվով 8 միացություն ենթարկվել են խոր հետազոտության ցնցումային տարբեր թեստերով և հոգեմետ հատկությունների բացահայտման համար՝ «բաց դաշտ», «բարձրացված խաչածն լաբիրինթոս», «հարկադրված լող», «պասիվ խուսափման պայմանական ռեակցիա» թեստերով՝ կիրառելով տարբեր փորձարարական կենդանիներ՝ աուտորեդ մկներ և առնետներ:

«Այդ նշված թեստերով միացությունները ցուցաբերել են բարձր հակացնցումային, վարքագիծն ակտիվացնող կամ ընկճող հատկություն, անքսիոլիտիկ հատկություն-

ներ, որոշակի հակադեպրեսանտ ազդեցություն: Ուսումնասիրված միացությունները «պտտվող առանցքի» մոդելով հետազոտված դեղաչափերով չեն ունեցել միոռե-լաքսանտ ազդեցություն»,- ասաց հոգեմետ միացությունների հետազոտման խմբի ղեկավար, կենսաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Պարոնիկյանը:

Նա նշեց, որ լաբորատորիայում ուսումնասիրվել է նաև 52 քիմիական նոր միացությունների հակամոնոամինօքսիդազային ակտիվությունը, որը բնորոշում է նրանց հակադեպրեսանտ ակտիվությունն առնետների



ուղեղում in vitro փորձի պայմաններում: Արդյունքում առանձնացվել են սպիրոբենզոլ խինազոլինների, կոնդենսցված պիրիմիդինների, ամինաթթուների հիդանտոինների ածանցյալներ՝ հետագա խոր ուսումնասիրությունների համար:

«Որոշ ընտրված միացություններ պիրագոլիլթենոպիրիդինների և պիրագոլիլթենոհիդոլիսինոլինների շարքից իրականացվող թեմայի շրջանակներում ենթարկվել են պաթոփստոլոգիական ուսումնասիրման, որոնք իրականացվել են հիպոկամպում և էնտորինալ (ուղեղի կառուցվածքներ, որոնք պատասխանատու են հոգեմետ հատկությունների դրսևորման համար) կեղևում: Բացահայտված է միացություն, որն ունի մեյորոտրոպ ակտիվություն և կանխում է կորագոլալ առաջացած գլիոզը և մեյորոնների կորուստը», - ասաց Ռուզաննա Պարոնիկյանը:

Չնայած մի շարք հիվանդությունների զարգացումը կանխատեսելու և օրգանիզմի վիճակը գնահատելու տարբեր մեթոդների մշակման զգալի առաջընթացին՝ ներկայում արդիական է նոր, ավելի արդյունավետ և լայնորեն հասանելի մոտեցումների որոնումը՝ օրգանիզմի

ֆունկցիոնալ վիճակը և վաղաժամ խանգարումներն օբյեկտիվորեն գնահատելու համար: «Այս առումով ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտում մշակված «Բիոսկոպ» սարքավորումային համալիրը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Մեր հետազոտությունները ցույց են տվել «Բիոսկոպ» սարքավորումային համալիրի օգտագործման հնարավորությունը՝ ոչ ինվազիվ (առանց շվիման) ուսումնասիրելու օրգանիզմում էպիլեպտիֆորմ վիճակների կանխման և պաշտպանման բնույթով՝ օգտագործելով հայտնի հակաէպիլեպտիկներ՝ ֆենոբարբիտալ և դիազեպամ, ինչպես նաև գնահատելու ժամանակակից դեղամիջոցներ լամոտրիջինի և տոպիրոմատի օպտիմալ չափաբաժինները՝ օրգանիզմի էպիլեպտիֆորմ վիճակները կանխելու համար»,- ասաց Ռուզաննա Պարոնիկյանը:

Շարունակվել են աշխատանքները «Բիոսկոպ» ապարատային համալիրի կիրառմամբ այլ հակաէպիլեպտիկ դեղամիջոցների, մասնավորապես դիլանտինի, դեպակինի և զարոնտինի հետ ուսումնասիրություններում: Առաջարկվել է օգտագործել այս նոր մեթոդը որպես սքրինինգային՝ հակացնցումային դեղամիջոցների հայտնաբերման համար: Ուսումնասիրությունները հիմնականում իրականացվել են բազային հետազոտությունների, ինչպես նաև ՀՀ գիտության կոմիտեի «18T-1D066» դրամաշնորհի շրջանակներում, այժմ էլ կատարվում են «21T-3C101» թեմայի շրջանակներում: Աշխատանքներում ներգրավված են երիտասարդ գիտնականներ, քիմիկոսներ Շուշան Դաշյանը, Արփինե Հարությունյանը, կենսաբաններ Տաթևիկ Առաքելյանը, Սոնա Բուլոյանը, Լիլիթ Արշակյանը:

Կատարված աշխատանքների համոզեալ մեծ հետաքրքրություն կա միջազգային հանրության կողմից, որն արտահայտվում է մեջբերվող աշխատանքների քանակով և մի շարք պարբերականների կողմից մամուլային աշխատանքները տպագրելու հրավերներով: Աշխատանքների մի մասն այժմ պատրաստվում է հրատարակման, մի մասն արդեն տպագրվել է գիտական հեղինակավոր պարբերականներում՝ «Журнал органической химии: «Химико-фармацевтический журнал: «Неврологический журнал имени Л. Бадаляна: <https://doi.org/10.31088/CEM2021.10.4.53-62>, «ՀՀ մտավոր սեփականության գործակալություն»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ...

➤5 հրեշտակների որմնանկարները, գլուխը թաքցնում էր մոր գոգմոցի մեջ, որովհետև տեսնում էր սև հրեշտակին: Գորկին միշտ ասել է մարդկանց մեջ եղած չարությունը, որը, սակայն, զգացել է ողջ կյանքում: Նշանավոր գերմանացի փիլիսոփա Էմանուել Կանտը մանրամասն քննել է մարդկային բնավորության մեջ եղած չարի ու բարու պայթարը:

1938-ին Գորկին ֆոտոնկարի հիման վրա վերստին վերականգնում է մոր դիմանկարը, որի աչքերն այնքան հզոր բարություն են արտահայտում, կարծես ուզում են հենց այդ հայացքով ընչացնել չարը: 1943-ի հուլիսին Վիրջինիայի Լինկոլն քաղաքից Վարդուշին՝ քոռը, գրած նամակում նկարիչը հայի աչքերի մասին գրում է. «Մեր աչքերը: Մեր հայկական աչքերը ավելի շուտ են խոսում, քան շուրթերը կշարժվեն, և դեռ շարունակում են խոսել, երբ շուրթերն արդեն դադարել են խոսել»:

Հետագայում՝ 1947-ի հունվարին, Նյու Յորքից Վարդուշին գրած նամակում Գորկին նկարելու իր մեթոդը չի կապում սյուռեալիզմի հետ: Նրա կարծիքով որոշ սյուռեալիստների մոտ կյանքի մասին մտքերը բավականին տարօրինակ են, թեթևամիտ, թեթևալիկ: Արվեստը պետք է միշտ անկեղծ մնա: Գուցե իր պատկերացումներն ուրիշ են, որովհետև ինքը հայ է, իսկ նրանք՝ ոչ. «Արվեստը պետք է լինի լուրջ և ոչ թե ծաղր ու կատակերգություն: Մարդը չի ծիծաղում այն բանի վրա, ինչը սիրում է»:

Գորկու կարծիքով մարդը ձգտում է անսահմանության, նա ընդվզում է սահմանափակի դեմ և արվեստում որոնում նոր հորիզոններ: Նկարիչը անսահմանություն է տեսնում անգամ հայկական ծիրանի մեջ: Նրա կարծիքով Հայաստանը լի է անսահմանություններով: Նրա մեջ նոր գաղափարներ են ծնում մանկության տարիներին տեսած Աղթամարը, Վարազա վանքը, Չարահանի Սուրբ Նշանը, Վանի ժայռի Միերի դուռը: Դրանց մեջ կան բազում անսահմանություններ, որոնք և դարձել են նրա արվեստի չափանիշները:

Գորկին հիմնալի գիտի Հայաստանի պատմությունը: Նա նշում է, որ աշխարհում հայերն առաջինը գտան եր-

կաթի գյուղը, ստեղծեցին արտիստիկ արվեստ Արտաշեսի և Տիգրանի ժամանակներում: Առաջինն աշխարհում դարձան քրիստոնյա երկիր, հիմնեցին Հայաստանի առաքելական եկեղեցին: Շարունակեցին մախնիների փառահեղ ավանդույթներով կառուցել նոր վանքեր, եկեղեցիներ, տաճարներ, պալատներ: Հայերն ունեին արքայական ընտանիքներ՝ Բագրատունիներ, Օրբելյաններ, Ռուբինյաններ. «Անի քաղաքը, որը կառուցել են Բագրատունիները, ուներ 1001 եկեղեցի, ու թեև այն ոչնչացվել է թուրք բարոսների կողմից, շատ խոշոր կառույցներ դեռևս կանգուն են մնացել»: Նա Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին համարում է ճարտարապետության պատմության մեջ արվեստի ամենաառաջադեմ ստեղծագործություններից:

Նկարիչը հիշում է Տրդատ ճարտարապետին, որը Հուստինիանոս բյուզանդական արքայից դարեր հետո վերաշինեց Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի կործանված գմբեթը: Պոլսի խոշորագույն ճարտարապետը եղել է Սիման անունով հայը, որին թուրքերը ստիպել են մոռանալ իր հայ լինելը: Այվազովսկին՝ Ռուսաստանի նշանավոր ծովանկարիչը, նույնպես հայ էր:

Այնքան արդիական են հնչում Գորկու հետևյալ խոսքերը՝ գրված 1947-ի մայիսի 4-ին. «Մենք արվեստի ժողովուրդ ենք: Եվ արվեստը շատ ավելի բարձր է, քան պատերազմը, քանզի արվեստը ստեղծում է, մինչդեռ պատերազմը ոչնչացնում է: Արվեստը պահպանում է գեղեցկությունը, մինչդեռ պատերազմը ծնում է միայն այլանդակություն և դժբախտություն: Մի օր աշխարհն ավելի լավ կժամոթանա Հայաստանի արվեստին: Հրապարակայնությունը երբեք չի եղել որակի չափանիշ: Ավելի շուտ այն եղել է քայքայիչ: Հայաստանը ոչ միայն աշխարհի խաչներուկներում է եղել, այլև կառուցել է այն իր սեփական մկաններով»:

Lader-ը իր գրքի վերջում գետեղել է Արշիլ Գորկու ցուցահանդեսների, նրա մասին գրված գրքերի, հոդվածների, ֆիլմերի մատենագիտությունը: Այն շատ տպավորիչ է: Վանը, որը Վանի թագավորության մայրաքաղաքն էր, ծաղկում վիճակում էր բոլոր այն ժամանակահատվածնե-

րում, երբ Հայաստանն ուներ պետականություն: Պատահական չէ, որ ֆրանսիացի հայագետ Իվ Տերմոնը Վանի մասին կրկնում է հայտնի ասացվածքը. «Այս կյանքում Վանը, մյուս կյանքում՝ դրախտը»:

Արշիլ Գորկուն նվիրված ֆիլմերի մեջ պետք է առանձնացնել Ատոմ Էգոյանի «Արարատ», որի համար կանադահայ բեմադրիչը 2002-ին ստացավ Կաննի կինոփառատոնի «Ոսկե արմավենու ծյուղը»: Ատոմ Էգոյանը ֆիլմի մեջ նկարահանվելու էր հրավիրել հոլիվուդյան նշանավոր դերասանների և ամենակարևորը՝ աշխարհահռչակ Շառլ Ազնավուրին: 2002 թվականին ՇՈՏՈյան տոներից մեկտոբին, ամերիկյան «Միրոմակս» կազմակերպությունը, որն իրավունք էր ստացել «Արարատ» ֆիլմը ցուցադրելու, 2000 դիմում ստացավ Թուրքիայի կառավարությունից՝ ֆիլմն արգելելու պահանջով:

Արշիլ Գորկին նշանավոր է ոչ միայն ամերիկյան նկարչության մեջ, այլև համաշխարհային: Նա նոր էջ է բացել աշխարհի նկարչության պատմության մեջ: Դա պատահական չէր: Մանկության տպավորությունները, Վանի և նրա շրջակայքի ճարտարապետական հուշարձանները, Հայաստանի բնությունը, Արարատ լեռը, միջնադարյան հայ մանրանկարչությունը, Սուրբ Խաչ եկեղեցու կատարյալ ճարտարապետությունը՝ շքեղ որմնաքանդակներով, անցնելի տպավորություն են թողել մանուկ համճարի վրա: Այդ տպավորությունները վերակենդանացան նրա արտարկալ ու գունեղ նկարներում, որոնցում նա գտավ իր կորցրած հայրենիքն ու հարազատներին:

Գորկու նամակներից երևում են նրա փիլիսոփայական սահմանումներն իսկական արվեստի մասին: Նա, իրոք, իր նկարներով մարդկության համար վերականգնեց իր խաղաղ, զարգացած, ստեղծագործ հայրենիքը:

Գորկու նամակները հատկապես ուղեցույց են նկարչության և արվեստի բնագավառը ոտք դնող երիտասարդների համար, այդ նամակների միջոցով հասկանալի է դառնում իսկական արվեստի փիլիսոփայությունը:

**Սեփա ԴՈՒՆԻԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**



Համալրվեց Գողթն-Նախիջևանի բարբառներին նվիրված ուսումնասիրությունների շարքը

Օրերս ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կայքում (<http://language.sci.am>) տեղադրվել է ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Արտակ Վարդանյանի «Հյուսիսային Գողթնի միջբարբառը» մենագրության էլեկտրոնային տարբերակը:

Աշխատության մեջ քննության են ենթարկված անցյալ դարում հայաթափված Նախիջևանի Գողթն գավառի հյուսիսային Բիստ, Խուրստ (Խուրց), Մեսրոպական (Նասրվազ), Ողոհի (Ալահի),

Ռամիս, Փառակա տեղաբնիկ գյուղերի չուսումնասիրված խոսվածքները: Գիրքը հեղինակի՝ տարիների հետազոտական ու հավաքչական աշխատանքի արդյունքն է:

Ազուլիսի բարբառը կամ գոկերենը ընդգրկում էր պատմական Գողթն գավառի հարավային մասում տեղադրված Վերին Ազուլիս ավանը, Ներքին Ազուլիս, Տանակերտ, Ցղնա, Քաղաքիկ, Դիսար, Հանդամեզ գյուղերը: Լինելով հայերենի տարածքային ամենաառանձնահատուկ տարբերակներից մեկը՝ այս բարբառը ժամանակին պատշաճ ուսումնասիրվել է ինչպես հայ, այնպես էլ օտար լեզվաբանների կողմից, սակայն գավառի հյուսիսային մասում գտնվող վերոհիշյալ գյուղերի խոսվածքներն առանձին չեն ուսումնասիրվել: Այս խոսվածքներ

Մեսրոպականի և Բիստի խոսվածքները: Հաշվի առնելով, որ տառաջորդները վերջին բարբառակիրներն են մեր օրերում ապրում Ռամիս և Ողոհի գյուղերի նախկին բնակիչներից՝ Ա. Վարդանյանը անհապաղ ձեռնամուխ է եղել այս բնականավոր խոսվածքների գրանցմանը: Բարբառագետին, անշուշտ, օգնել է այն համոզմանը, որ ծնունդով Նախիջևանից է, եղել է «Նախիջևան» հայրենակցական միության նախագահը և ամձամբ է ծանաչել իր հայրենակից բարբառախոսներին:

Հետազոտողը, կատարելով մշակված գյուղերի խոսվածքների հատկանիշների համեմատական քննություն, կիրառելով բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը, բացահայտել է խնդրո առարկա խոսվածքների

ցախ-Սյունիքի, Մեղրու, Ազուլիսի, ինչի հիման վրա էլ այդ միավորն անվանել է Հյուսիսային Գողթնի միջբարբառ: Հեղինակը գիտականորեն հիմնավորել է իր դիտարկումներն ու եզրահանգումները:

Աշխատության մեջ զետեղված են նաև բնականավոր խոսվածքների բանագրությունները և այդ խոսվածքներով բանահյուսական նմուշներ:

Ա. Վարդանյանը մենագրությունը երախտագիտությամբ նվիրել է իր գործընկերոջ և թեկնածուական ատենախոսության ղեկավար, ճանաչված բարբառագետ Անի Հանյանի հիշատակին:

Հայոց պատմական հայրենիքի նվիրական հատվածներից մեկը՝ Գողթն-Նախիջևանը, թուրք-բուլղարական խարդավանքով Աղդեջան անունով նորաբույս պետությունը նվիրաբերվելուց հետո ոչ միայն իսպառ հայաթափվեց, այլև ենթարկվեց մշակութային ու լեզվական եղեռնի. ամբողջովին ոչնչացվեցին տարածքի հայ մշակույթի հազարավոր հուշարձաններ և հայերենի ամբողջ խումբ բարբառներ:

Արժեքավոր այս աշխատանքով հեղինակը մոռացությունից փրկել է Գողթնի տեղաբնիկ գյուղերի չուսումնասիրված խոսվածքախոսները: Մենագրությունն ամբողջացնում է երկրամասի ու բարբառներին նվիրված ուսումնասիրությունների շարքը՝ համալրելով նաև Գողթն-Նախիջևանի նվիրված հետազոտությունների շարքը. երկրամաս, որի պատմական հուշարձանների վիրավոր բեկորները այսօր էլ սպասում են հայոց նվիրական այս եզերքի մոր արշալույսին և իրենց օրինական տերերի վերադարձին...

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու

ՀԻՂՐՈՊՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ Գ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտնականների կողմից մշակվել են ճապոնական կաղամբ միզուկային, չինական կաղամբ պակ-չոյի և ռուկոլայի անհող աճեցման կենսատեխնոլոգիաները:

Առաջին անգամ կառուցվել և փորձարկվել է հորիզոնական տարածվող բույսերի ուղղաձիգ աճեցման հիդրոպոնիկ մոդել, հաջողությամբ աճեցվել է սեխի մոր սորտ: Առաջին անգամ հիդրոպոնիկ պայմաններում աճեցվել է Հայաստանում հազվադեպ հանդիպող խավրժի բույսը, որը կիրառական տեսանկյունից պոտենցիալ մոր բուսատեսակ է սննդային արդյունաբերության համար: Աճեցվել են գարեջրի հումք հանդիսացող հիդրոպոնիկ գալունկի կոմեր, որոնք փոխանցվել են գարեջրագործներին՝ փորձնական, փոքրածավալ գարեջուր արտադրելու համար (ղեկավար՝ կ.գ.ք. Ա. Թադևոսյան):

Մասնագետների կողմից մշակվել են գործնական առաջարկներ՝ մեղրախոտի և ամսաբողկի՝ միկրոտարրերով առավել հագեցած բուսահումքի ստացման համար (ղեկավար՝ գ.գ.դ. Մ. Բաբախանյան):

Մշակվել են նաև ռադիոպաշտպանիչների գործնական առաջարկներ, որոնց կիրառումը հիդրոպոնիկայում և ագրոհամակեցություններում կապահովի ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումքի ստացում (ղեկավար՝ գ.գ.ք. Լ. Ղալաշյան):

Գիտական ուսումնասիրություններն ինստիտուտի աշխատակիցների կողմից շարունակվում են:

Ստեփան ՊԱՊԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

ՀԵՏԱՐՔՐԱԿԱՆ

ՄԻՆՁ ԱՆՇՈՒ ՄԻՆ ԿԱՐՈՒՄՆԵՐ

Հեռախոսի զանգը ակադեմիկոս Եվգենի Տարլեին արթնացրեց վաղ առավոտյան: - Ընկեր Տարլե, Դուք կարդացե՞լ եք այսօրվա «Պրավդան»:

- Ո՛չ, ընկեր Ստալին, դեռ չեմ կարդացել:

- Դե, ուրեմն լավ է: Եվ մի էլ կարդացե՛ք: Իմ ուշադրությունից վրիպել է:

Տարլեն բաց արեց թերթը. այնտեղ տեսավ իր մասին տպված ծավալուն ու ջախջախիչ հոդված վերջին գրքի մասին:

Բոլորը զարմացած էին, թե Տարլեն որքան թեթև է տանում այդ հարվածը: Հաջորդ օրը մոր «Պրավդա»-ն դրական, գովերգող հոդված տպագրեց Տարլեի գրքի մասին:

ՄՏՐԱԴՎԱՐԻՈՒՄ ՀԵՏ ԱՆԵՐ

ՊԱՄԱՆԱԳԻՐ ՉՈՒՆԵՐ

Մի անգամ մշակվող ջուրակահար Յաշա Հեյֆեցին ելույթի հրավիրեցին Լոնդոնի հեռուստատեսություն: Նա համերգի կազմակերպիչներին խնդրեց, որ ելույթից առաջ հայտարարեն, որ ինքը նվագելու է մեծ Ստրադիվարիուսի ձեռքով պատրաստված ջուրակով:

Սակայն ելույթի կազմակերպիչները կտրուկ առարկեցին.

- Դա անհնարին է: Անգլիական հեռուստատեսությունը երաժշտական գործիքներ արտադրող ֆիրմաներին գովազդելու պայմանագիր չունի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է մրցույթ «ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 21-րդ կետի՝ կազմակերպության տնօրենի թեկնածությունն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները, որոնք կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Տնօրենի թեկնածուն պետք է ունենա գիտական աստիճան, ընտրության պահին լինի 65 տարեկանից ցածր տարիքի, ունենա գիտականակերպչական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ պետք է համապատասխանի գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկին:

Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Առաջադրումը հաստատող փաստաթուղթ
3. Լուսանկար
4. Ինքնակենսագրություն
5. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն
6. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն
7. Գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)
8. Հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ
9. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
10. Տեղեկանք մշտական բնակության վայրից
11. Բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)
12. Կազմակերպության զարգացման ծրագիր
13. Անձնագրի և սոց. քարտի պատճենները

Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) ներկայացնել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24, հեռ. 52-13-62:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 18.02.2022 թ.:

"ГИТУЙОН" ("Найка") газета НАН РА